ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N 88-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերով, 82-րդ հոդվածով և հիմք ընդունելով Փարաքար համայնքի ղեկավարի առաջարկությունը, Փարաքար համայնքի ավագանու «Զարգացման ծրագրերի, ֆինանսաբյուջետային, տնտեսական և ենթակառուցվածքների հարցերի» մշտական հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 15-ի N 5 որոշումը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2025-2030 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԱՐԹԵՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Ա. ՍԱՖԱՐՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 19
գ. Փարաքար

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի

Փարաքար համայնքի ավագանու

2025 թվականի օգոստոսի 19-ի N 88-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՓԱՐԱՔԱՐ 2025 **Թ.**

Սիրելի՛ փարաքարցիներ,

Համայնքի զարգացման յուրաքանչյուր քայլ սկսվում է պատասխանատու որոշումից և միասնական ջանքից: Մեր առջև հստակ տեսիլք կա հինգ տարիների ընթացքում Փարաքարը դարձնել ավելի բարեկարգ, անվտանգ, բարեկեցիկ համայնք՝ մեր բոլոր բնակիչների ակնկալիքներին, կարիքներին և սպասելիքներին համահունչ:

Փարաքար համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ) ներկայացնում է մեր զարգացման հստակ ուղենիշները՝ կառուցված համայնքի իրական կարիքների, բնակիչների առաջարկների և մասնագիտական վերլուծությունների հիման վրա, որի իրագործումը պահանջում է համատեղ և համակարգված աշխատանք:

Փարաքար համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակվել է համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի համակողմանի ուսումնասիրության, առկա նախագծերի վերլուծության և զարգացման հնարավորությունների գնահատման հիման վրա, որոնք ուղղորդում են մեր հայացքները առաջնահերթության կարգով դիտարկել գյուղատնտեսական, կոմունալ տնտեսության, կրթական, քաղաքաշինական, առողջապահական, տրանսպորտային, երիտասարդության, մշակութային, մարզական, սոցիալական, շրջակա միջավայրի պահպանության, զբոսաշրջության ոլորտների հարցերին:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում, համայնքում իրականացնելու ենք բազում ծրագրեր և բարեփոխումներ վերը նկարագրված իրողությունները ստանալու ակնկալիքով:

Սույն ռազմավարությունը նպատակ է հետապնդում ձևավորելու արդյունավետ կառավարման մեխանիզմներ, բարելավելու համայնքային ենթակառուցվածքները և ապահովելու բնակչության կյանքի որակի շարունակական բարձրացումը: Այն միտված է ապահովելու Փարաքար համայնքի համաչափ զարգացումը, սոցիալական բոլոր խմբերի համար հավասար հնարավորությունների ստեղծումը և արդի մարտահրավերին համայնքի դիմակայության ինստիտուցիոնալ կարողությունների ընդլայնմանը:

Սիրելի՛ փարաքարցիներ,

Վստահ ենք, որ միասնական ջանքերով, նորարարական մտածողությամբ և համայնքի յուրաքանչյուր բնակչի ակտիվ մասնակցությամբ, Փարաքարը ոչ միայն կհասնի իր զարգացման նպատակներին, այլև կդառնա օրինակելի համայնք՝ ի շնորհիվ նախաձեռնող խմբի կայուն հավատի ու արհեստավարժության: Մեր տեսիլքը վաղվա հաջողության գրավականն է: Եկեք կերտենք այն միասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱԼՈՂՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

1. ՓԱՐԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ 8
2. ԹԱԻՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐ 9
3. ՄԵՐՁԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ 10
4. ՄՈՒՍԱԼԵՌ ԲՆԱԿԱՎԱՅՐ 11
5. ԱՐԵՎԱՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ 13
6. ՆՈՐԱԿԵՐՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ 13
7. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ 14
8. ԱՅԳԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ 15
9. ՊՏՂՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ 15

II. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 17

ՆՊԱՏԱԿԸ 18

ԽՆԴԻՐՆԵՐԸ 18

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 18

III. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ 20

ՆՊԱՏԱԿԸ 21

ԽՆԴԻՐՆԵՐԸ 21

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 22

IV. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 23

ՆՊԱՏԱԿԸ 24

ԽՆԴԻՐՆԵՐԸ 24

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 24

V. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ 25

ՆՊԱՏԱԿԸ 26

ԽՆԴԻՐՆԵՐԸ 26

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 27

VI. ՄՇԱԿՈՒՅԹ 28

ՆՊԱՏԱԿԸ 30

ԽՆԴԻՐՆԵՐԸ 31

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 31
VII. **ԱՂԵՏՆԵՐԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ** 32
ՆՊԱՏԱԿԸ 34
ԽՆԴԻՐՆԵՐԸ 34
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 35
VIII. **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ** 36
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 37
IX. **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ** 37
ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ - ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ 39
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ 40
ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 42
ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ 43
X. **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ** 45
XI. **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ** 45
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ 46
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 56
ՆՊԱՏԱԿԸ 57
ԽՆԴԻՐՆԵՐԸ 58
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 58
XII. **ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ** 59
XIII. **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ** 62
ՆՊԱՏԱԿԸ 65
XIV. **ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ** 65
XV. **ՏՐԱՆՍՊՈՐՏ** 65
ՆՊԱՏԱԿԸ 66
XVI. **ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ** 67
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԵՎՏՐԻ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 69
XVII. **ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ** 70
ՆՊԱՏԱԿԸ 70
XVIII. **ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐ** 71
XIX. **ԿՈՅՈՒՂԻ** 72

XX. **ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ** 72
XXI. **ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ** 73
XXII. **ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ** 73
XXIII. **ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ** 74
XXIV. **ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐ** 74
XXV. **ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ** 75
ՆՊԱՏԱԿԸ 75
ԽՆԴԻՐՆԵՐ 75
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 76
XIX. **ՖԻՆԱՆՍՆԵՐ** 77
XXVI. **ԱՄՓՈՓՈՒՄ** 82

I. ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքը ձևավորվել է 2021 թվականի դեկտեմբերի 5-ին՝ ՀՀ Արմավիրի մարզում կայացած համամասնական ընտրակարգով՝ ՏԻՄ ընտրությունների արդյունքում՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում կատարված փոփոխությունների: Համայնքը ընդգրկում է թվով 9 բնակավայր՝ Փարաքար, Թաիրով, Մերձավան, Մուսալեռ, Արևաշատ, Նորակերտ, Բաղրամյան, Այգեկ, Պտղունք: Համայնքի վարչական տարածքի վերաբերյալ տվյալները ներկայացվում են ստորև բերվող գծապատկերի օգնությամբ:



Գծապատկեր 1. Փարաքար համայնքի գծապատկերը

Համայնքի բնակչության մասին ամփոփ տեղեկատվությունը ըստ տարիքային խմբերի ներկայացվում է ստորև բերվող աղյուսակով:

h/h	գյուղերը	բնակիչների թվաքանակը
1	Փարաքար	6977
2	Թաիրով	3058

3	Մերձավան	4252
4	Այգեկ	1699
5	Բաղրամյան	3112
6	Նորակերտ	3383
7	Մուսալեռ	3287
8	Պտղունք	2174
9	Արևաշատ	1990
Ընդամենը		29932

Ընդ որում՝ արական սեռի բնակիչները 14903 են, իսկ իգականը՝ 15029:

Գծապատկերի ձևաչափով ներկայացվում է Փարաքար համայնքի բնակչության թվաքանակը, ըստ գյուղերի:



Մի քանի ընդհանրական բնութագրիչներով ներկայացվում է Փարաքար համայնքի վարչական միավորները՝ գյուղերը, նպատակ ունենալով նկարագրել համայնքի մեկնարկային իրավիճակը:

1. ՓԱՐԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար բնակավայրը գտնվում է մարզի արևելյան հատվածում՝ մայրաքաղաք Երևանի մերձակա տարածքում: Բնակավայրի տարածքը մոտ 18 քառակուսի կիլոմետր է: Բնակավայրի բնակչության թվաքանակը կազմում է 6977 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հիմնականում գյուղատնտեսությամբ, առևտրով, սպասարկման ոլորտով: Տնտեսության մեջ զգալի տեղ է զբաղեցնում նաև փոքր և միջին բիզնեսը, հատկապես՝ պահեստային տնտեսությունները, լոգիստիկ ծառայությունները և արտադրական միավորները, որոնք տեղակայված են բնակավայր տարածքում՝ շնորհիվ մայրուղիների և Երևանին հարելու նպաստավոր դիրքի: Փարաքար բնակավայրը առանձնանում է նաև պատմամշակութային արժեքներով և մշակույթային ակտիվ կյանքով: Բնակավայրում գործում են կրթական և մշակույթային խմբակներ և հասարակական կազմակերպություններ:

Փարաքար բնակավայրում գործում է դպրոց, արվեստի դպրոց, Մշակույթի և երիտասարդության պալատ, գրադարան, ATC քոլեջ, մանկապարտեզ, բուժամբուլատորիա, կառուցվում է սպորտ դպրոց, ինչպես նաև բնակավայրում տեղակայված են 2 եկեղեցի՝ Սուրբ Հարություն և Սուրբ Մարիամ Աստվածածին: Բնակավայրում առկա չէ մարզադաշտ, զբոսայգի և երիտասարդական խումբ:

2. ԹԱԻՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Թաիրով բնակավայրը հիմնադրվել է 1946 թվականին, հիմնականում Պարսկաստանից, Սիրիայից, Հունաստանից գաղթած շուրջ 30 ընտանիքների և տեղաբնակ մի քանի ընտանիքների կողմից: Շուրջ 71 տարի է ինչ գյուղը գոյություն ունի: Այն իր անունը ստացել է ի պատիվ Արշալույս Թաիրյանի:

Արշալույս Թաիրյանը եղել է հայտնի պտղաբույծ, հայազգի մեծ գիտնական, գինեգործ, որը գործունեություն է ծավալել Ռուսաստանի Դաշնությունում և Ուկրանիայում: Ի պատիվ նրա գյուղը ստացավ Թաիրով անվանումը: Թաիրով բնակավայրում գործում է գրադարան, մշակույթի տուն, մանկապարտեզ,

բուժամբուլատորիա, դպրոց, մարզադաշտ և խաղահրապարակ, առկա չէ արվեստի դպրոց, սպորտ դպրոց, զբոսայգի և երիտասարդական ակումբ:

3. ՄԵՐՁԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Մերձավան բնակավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում: Գյուղը հիմնադրվել է 1946-1947 թվականներին՝ Երևան քաղաքի վարչական տարածքում, Շահումյանի շրջանի Հաղթանակ բնակավայրին կից, Ղռերի տեղում՝ Գենետիկայի գիտահետազոտական ինստիտուտից առանձնացված երկրագործության փորձարարական բազայի հիման վրա: Գյուղը կոչվել է Փարաքարի /էքսպերիմենտալ/ փորձարարական բազա: Գյուղի հիմնադրման ընթացքում կարևորվում էր Ստորին–Հրազդան ջրատարի կառուցումը, որը տեղանքին տալիս էր զարթոնքի յուրատեսակ երանգ: Գիտնականների ուսումնասիրությունները պարզել էին, որ այդ հողերը պիտանի էին խաղողի ու պտղի այգիների հիմնման և գիտական աշխատանքների ծավալման համար: 1949 թվականին կազմավորվեց խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտի փորձարարական բազան և այդ պատճառով էլ 1959 թվականին գյուղն անվանվեց Ակադեմիա: Գյուղի բնակչությունը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր շրջաններից, նախկին Խորհրդային Հանրապետության /հատկապես Վրաստանի և Ադրբեջանի/ հայաբնակ բնակավայրերից, ինչպես նաև հարևան Իրանից: 1964 թվականին գործող Երկրագործության գիտահետազոտական ինստիտուտի բույսերի պաշտպանության բաժինը տարանջատվել և ստեղծվել է առանձին Բույսերի պաշտպանության գիտահետազոտական ինստիտուտ՝ իր ենթակա կառույցներով: 1965 թվականին գյուղը Երևան քաղաքի Շահումյանի շրջանի վարչական տարածքից առանձնացվել և միացվել է Էջմիածնի շրջանին: 1969 թվականին գյուղը վերանվանվել է Մերձավան՝ Երևան քաղաքին մերձ և քաղաքատիպ ավանին նման լինելու պատճառով: Մերձավան բնակավայրում գործում է, դպրոց, մանկապարտեզ, գրադարան, բուժամբուլատորիա, մշակույթի տուն, մարզադաշտ և խաղահրապարակ, առկա չէ արվեստի դպրոց, սպորտ դպրոց, զբոսայգի և երիտասարդական ակումբ:

4. ՄՈՒՍԱԼԵՌ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Փարաքարի, Վարմազիարի (Արևաշատ) և Զվարթնոցի միջև ընկած վայրը հայտնի է եղել Նասիրապատ անունով. եղել է ամայի ղռեր: Երևանի օկրուգային դատարանի անդամ Ներսես Աթաբեկյանը 1880 թ. դիմում է փոխարքային՝ խնդրով, որ իրեն հող տրամադրեն Աթաբեկյանների՝ Ղարաբաղում ունեցած նախկին գյուղերի փոխարեն: Նույն թվականին Ցարական կառավարող սենատի հրամանով Երևան նահանգում գտնվող Նասիրապատի զգալի մասը տրվում է Ն. Աթաբեկյանին՝ առհավետ և ժառանգաբար տիրելու: Հետագայում կալվածքը կոչվել է Ներսեսապատ, ապա Շադրլու: Աթաբեկյանները կարողացել են ջրովի դարձնել միայն կալվածքի կեսը: Մշակել են բամբակ, հացահատիկային կուլտուրաներ, առվույտ և այլն: 1905-1908 թթ. կալվածքում կառուցվել է բամբակազտիչ և բրինձ մաքրող փոքր գործարաններ՝ամրապնդելով հողագործության առևտրա-արդյունաբերական բնույթը: Սակայն տարիների ընթացքում հողերի բերրիության ընկնելու պատճառով տնտեսությունը սկսվում է քայքայվել:

1920թ. կալվածատիրական հողերն ազգայնացվում են բոլոր և հիմնականում տրամադրվում տնտեսություններին: 1921թ. Աթաբեկյանների նախկին կալվածքում սկսվում են սովխոզի կազմակերպման աշխատանքները: Աստիճանաբար զարգանում է գյուղատնտեսությունը և տնտեսապես ամրապնդվում: 1930-ականներին նոր էտապ է սկսվում սովխոզի պատմության մեջ. տնտեսությունում կատարվում են ջրաշինարարական-մելիորատիվ աշխատանքներ, հիմնվում են խաղողի և պտղի նոր այգիներ: Հայաստանի ողջ տարածքում առաջին անգամ Նասիրապատում է օգտագործվում էլեկտրագութանը (1933թ.): Հայրենական պատերազմից առաջ այգիների տարածությունը կազմում էր շուրջ 250 հա: Հայրենական պատերազմի տարիներին սովխոզը կարողանում է պաշտպանել իր նվաճումները և պետությանը տալ հազարավոր տոննա խաղող, պտուղ և այլ գյուղատնտեսական մթերքներ: Տարիների ընթացքում Նասիրապատում կառուցվում են գյուղատնտեսական մթերքների արտադրման խոշոր կենտրոններ, հասարակական, կենցաղային և կոմունալ սպասարկման այլ

օբյեկտներ: Հայրենական պատերազմի տարիներին կառուցվում է մշակույթի տունը՝ 450 նստատեղ ունեցող դահլիճով: Վերջինս ուներ երգի և պարի անսամբլ՝ավելի քան 40 նվագողներով, երգողներով և պարողներով: Մշակույթի տանը կից գործել է նաև գեղարվեստական և մասնագիտական գրականությամբ հարուստ գրադարան և ընթերցասրահ: Կոմերիտական կազմակերպության ակտիվ մասնակցությամբ սովխոզի կենտրոնում կառուցվել է ֆուտբոլի դաշտ, վոլեյբոլի և բասկետբոլի հրապարակներ, կազմավորվել ֆուտբոլի, վոլեյբոլի և բասկետբոլի թիմեր: Կառուցվել է 25մ երկարությամբ լողավազան: Այստեղ հիմնականում բնակություն են հաստատել և աշխատել նախկին բատրակներ, առաջին համաշխարհային պատերազմի և թուրքական արշավանքների ժամանակ գաղթած ընտանիքներ և հետագայում տարբեր երկրներից Հայաստան վերադարձած տարագիր հայ ընտանիքներ: Բնակչության մի մասը հայրենադարձել են Լիբանանից, Սիրիայից, Եգիպտոսից, Կիլիկիայի Մուսալեռի գյուղերից, Իրանից 1946 թվականին: Սովետական Հայաստանի սոցիալիստական տնտեսության առաջին օջախը 3-րդ սովխոզն է եղել, որը 1943թ. կոչվել է Ա. Միկոյանի անունով: ՀՍՍՌ գերագույն սովետի նախագահության 1957թ. դեկտեմբերի 30-ի հրամանով Միկոյանի անվան N3 սովխոզը կոչվել է Գինեվետ, այնուհետև, 1972թ. Հայաստանի գերագույն խորհրդի հրամանագրով էջմիածին շրջանի Գինեվետ ավանը վերանվանվել է Մուսալեռ ավանի: Բնակչության մի մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Հիմնականում մշակվում է խաղող, պտուղ, ցորեն, առվույտ և բանջար-բոստանային կուլտուրա: Գյուղում այժմ գործում են «Մուսալեռի տպագրատուն ՍՊԸ-ն, Պոլիէթիլենային տոպրակների արտադրամասը, Գինու գործարանը, «Կրադան» ՍՊԸ-ն: Բնակավայրում 2001թ. կառուցվել է «Սուրբ ամենափրկիչ» եկեղեցին:Գյուղի ուշագրավ կառույցը նրա հյուսիս-արևելքում, բարձունքի վրա կանգնեցված հուշարձանն է՝ ի հիշատակ 1915 թվականի Մուսա լեռան հերոսական մարտեր

(կառուցվել է 1976 թ.): Մուսալեռ բնակավայրում գործում է դպրոց, մանկապարտեզ, բուժամբուլատորիա, մարզադաշտ, խաղահրապարակ,զբոսայգի,

առկա չէ մշակույթի տուն, արվեստի դպրոց, սպորտ դպրոց և երիտասարդական ակումբ:

5. ԱՐԵՎԱՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Նախկին բնակիչների մի մասը գաղթել են 1828-1829 թվականներին Խոյից և Սալմաստից, իսկ մի մասն էլ եղեռնից փրկվածներն են, որոնք ընտանիք են կազմել և գյուղում կառուցել իրենց տները: Արևաշատում կա սբ. Աստվածածին եկեղեցի (1905-1907 թթ.), երկու մատուռ, երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան (1984 թ.): Արևաշատ բնակավայրում գործում է դպրոց, մանկապարտեզ, գրադարան, բուժամբուլատորիա, մշակույթի տուն՝ կից համայնքապետարանին և խաղահրապարակ, առկա չէ մարզադաշտ, արվեստի դպրոց, սպորտ դպրոց, զբոսայգի և երիտասարդական ակումբ:

6. ՆՈՐԱԿԵՐՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Նորակերտ գյուղը հիմնադրվել է 1946 թվականին: Սկզբնական շրջանում այն ձևավորվել է որպես միացյալ կոլտնտեսություն հարևան Բաղրամյանի անվան տնտեսության հետ համատեղ, այնուհետև առանձնացել և կազմավորվել է որպես խոր.տնտեսություն՝ մասնագիտացված այգեգործական ուղղությամբ՝ զուգակցված պտղաբուծության և անասնապահության հետ: Նորակերտի խորտնտեսությունը եղել է նախկին Էջմիածնի շրջանի զարգացած առաջավոր խաղողագործական տնտեսություններից մեկը:

Տնտեսության ղռապատային քարքարոտ հողակտորների վրա աճեցված խաղողը աչքի էր ընկում բարձր որակական ցուցանիշներով՝ խաղողի շաքարայնությունը կազմում էր 24.0-27.0%: Ցավոք սեփականաշնորհումից հետո տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության պայմաններում քանդվեցին խաղողի այգիները, որոնք դրվեցին հիմնականում հացահատիկային մշակաբույսերի մշակության տակ, որը ցածր բերքատվության պայմաններում նպատակահարմար չէր և ներկայումս ոչ մի հեկտար ցորեն չի ցանվում և չմշակվող հողերի տեսակարար կշիռը համայնքում կազմում է 85-90%:

Նորակերտ նշանակում է նոր կերտված, ինչպես արդեն նշեցինք այն հիմնվելով 1946թ-ին հետագայում ընդարձակվեց և վերածվեց ծաղկուն բնակավայրի: Նորակերտի առաջին բնակիչները եղել են սկզբում մերձավոր արևելքի երկրներից /Սիրիա, Իրաք, Իրան/ հայրենադարձված մեր հայրենակիցները այնուհետև Կոտայքի շրջանի Աստղաբերդ գյուղից վերաբնակեցվել են այդ գյուղի բնակիչները: Հետագայում վերաբնակեցման կարգով բնակավայրում բնակություն են հաստատել հանրապետության տարբեր շրջաններից և հարևան Վրաստանի /Ախալքալաք/ և Ադրբեջանից վերաբնակեցված մեր հայրենակիցները: Այնպես, որ բնակչության կազմը միատարր չէ՝ կան նաև եզդիներ: Բնակավայրի վարչական տարածքում գործում են մի շարք հիմնարկ ձեռնարկություններ՝ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ, «Բարբոս» ՍՊԸ, «Բեկոր» ՍՊԸ և տասնյակ անհատ ձեռներեցներ, որոնք կազմակերպում են արտադրություն և առևտուր: Երթուղային 205 համարի միկրոավտոբուսը համայնքը կապում է անմիջականորեն Երևան քաղաքի հետ: Ներհամայնքային ճանապարհները ասֆալտապատվել կամ ամբողջովին /նաև մասնակի փոսալցումներ/ հիմնանորոգվել են 2014-2015 թվականների ընթացքում, դա շարունակական գործընթաց է, որը ֆինանսական միջոցների առկայության դեպքում անընդհատ կատարվելու է: Բնակավայրը շարունակում է կառուցապատվել գլխավոր հատակագծի շրջանակներում: Նորակերտ բնակավայրում գործում է դպրոց, մանկապարտեզ, գրադարան, բուժամբուլատորիա, մշակույթի տուն, մարզադաշտ և խաղահրապարակ առկա չէ արվեստի դպրոց, սպորտ դպրոց, զբոսայգի և երիտասարդական ակումբ:

7. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Բաղրամյան բնակավայրը հիմնվել է 1947 թվականին: Բաղրամյան բնակավայրի առաջին բնակիչները եկել են Սիրիայից և Իրաքից, նրանց առաջարկությամբ էլ համայնքը անվանվել է Սովետական միության զինված ուժերի մարշալ Հովհաննես Բաղրամյանի անունով: Բաղրամյանի բնակիչները

հիմնականում հայրենադարձներ են: Հետագայում բնակավայրը համալրվել է Շիրակի, Կոտայքի և հանրապետության այլ շրջաններից: Բաղրամյանի անունը կրող երկրագործական տնտեսությունը մեծ զարգացում է ապրել 1960-90-ական թվականներին: Բաղրամյան բնակավայրում գործում է դպրոց, մանկապարտեզ, գրադարան, բուժամբուլատորիա, մշակույթի տուն, խաղահրապարակ և զբոսայգի:

8. ԱՅԳԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

1947 թվականին կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության որոշմամբ Արարատյան դաշտի անմարդաբնակ, քարքարոտ, անջրդի հողերի վրա հիմնադրվել է բնակավայր, որը կոչվել է Նուշի սովխոզ: Հետագայում բնակավայրը վերանվանվել է 15-րդ սովխոզ, Կարմիր դրոշ սովխոզ, իսկ 1970-ական թվականներից կոչվում է Այգեկ: Այգեկ բնակավայրը բնակեցվել է Հայաստանի տարբեր շրջաններից եկած, Արևմտյան Հայաստանից ներգաղթած մարդկանցով, ովքեր շենացրել են երբեմնի պապակ հողերը: Հեռավորությունը Երևան քաղաքից 14կմ, մարզկենտրոնից՝ 39կմ, Վաղարշապատ քաղաքից՝10կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից 943մ է: Բնակավայրը երկկողմանի ճանապարհով միացված է Երևան-Էջմիածին մայրուղուն: Այգեկ բնակավայրում գործում է դպրոց, մանկապարտեզ, գրադարան, բուժամբուլատորիա, մշակույթի տուն, երիտասարդական ակումբ, զբոսայգի:

9. ՊՏՂՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ

1880 թվականին Ղարաբաղից եկած մեծահարուստ Ներսես Աթաբեկյանը դիմում է Կովկասի փոխարքային՝ խնդրելով իրեն հող տրամադրել՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու համար: 1885թ. հոկտեմբերի 24-ին Ցարական Ռուսաստանի սենատը իր հրամանով Երևանի նահանգում գտնվող Նասիրապատ կոչվող ղռերի զգալի մասը՝ ավելի քան 517 դեսյատին, առհավետ և ժառանգաբար տիրելու իրավունքով տրվեց Ներսես Աթաբեկյանին, որը հետագայում կոչվեց Ներսեսապատ՝ ապա Շադրլու: 1913թ. Աթաբեկյանը տարածքը կապալով տվեց Փարաքարի հայտնի

կուլակ Տիգրան Տեր-Մաթևոսյանին, որի տնօրինության ընթացքում նշված տարածքում գտնվող բամբակի և բրնձի դաշտերը հիմնովին շարքից դուրս եկան: 1920 թվականի դեկտեմբերի 28-ի դեկրետով ազգայնացվեցին բոլոր կալվածատիրական հողերը: Իսկ 1921 թվականի հունվարի 29-ին որոշվեց նշված տարածքներում հիմնել սովետական տնտեսություններ: Պտղունքն իր ներկայիս վարչական տարածքով հիմնադրվել է 1926 թվականին՝ որպես 3-րդ սովխոզին կից պտղաբուծական բրիգադա, որը ուներ 230 հեկտար պտղատու և 11 հեկտար խաղողի այգի, որի բերքատվությունը խիստ ցածր էր: 1931 թվականին նորաստեղծ 9-րդ սովխոզի դիրեկտոր է նշանակվում հայտնի կուսակցական, քաղաքական գործիչ և անվանի գյուղատնտես Ավագ Ավագյանը: Կազմավորումից հետո, չունենալով բավարար աշխատուժ, 9-րդ սովխոզի ղեկավարությունը դիմում է Էջմիածնում տեղակայված զինվորական գնդի հրամանատար Հովհաննես Բաղրամյանին՝ օգնության խնդրանքով: Ցուցաբերվում է մեծ օգնություն. տեղանքի խամ ու խոպան հողատարածքները մաքրվում են քարերից և հարթեցվում, կատարվում են տասնյակ հեկտարների ծիրանի և այլ մրգատու ծառերի տնկարք: 1945 թվականի հունվարի 1-ից վերադաս օրգանների որոշմամբ 3-րդ սովխոզից անջատվեց պտղաբուծական բաժանմունքը կոչվեց Բաղրամյանի անվան սովխոզ: 1946-1947 թթ. տնտեսության աշխատուժը համալրվեց Պարսկաստանից, Հունաստանից, Ֆրանսիայից, Մուսալեռից եկած հայրենադարձներով: 1957 թվականի ՀՍՍՌ Գերագույն Սովետի հրամանագրով Բաղրամյանի անվան սովխոզը կոչվեց Պտղունք: 1962 թվականին 3-րդ և 9-րդ սովխոզները միավորվեցին: 1991 թվականին Հայաստանի անկախացումից հետո սովխոզը տրոհվեց Մուսալեռ և Պտղունք համայնքների: Ներկայումս Պտղունք բնակավայրը ամբողջովին ապահովված է խմելու ջրով, ամբողջովին գազաֆիկացված է, գյուղի 90 տոկոսը ապահովված է փողոցային լուսավորության համակարգով, որից Երևան-Էջմիածին խճուղին՝ամբողջությամբ: Բարերարների նախաձեռնությամբ համայնքում կառուցվել և գործում է Արմենիան Լայթ Հաուս բարեգործական հիմնադրամը, որը ապաստան է բռնության զոհ դարձած միայնակ և անապահով կանանց ու երեխաների համար:Պտղունք բնակավայրից են ժողովրդական երգիչ

ՀՀ վաստակավոր գործիչ Գևորգ Չաքմանյանը, ինչպես նաև օպերային երգչուհի Թեհմինե Եղիազարյանը, ով երգում է Միլանի, Պետերբուրգի, Վիեննայի և այլ հայտնի բեմերում: Պտղունք բնակավայրում գործում է դպրոց, մանկապարտեզ, գրադարան, բուժամբուլատորիա, խաղահրապարակ և զբոսայգի:

Փարաքար համայնքի ռազմավարության նախաձեռնող խումբը սեփական ուսումնասիրությունների արդյունքում հանգել է այն եզրահանգմանը, որը համայնքի համաչափ զարգացման համար անհրաժեշտ կլինի ստորև ներկայացվող ոլորտներն ու ուղղությունները դիտարկել մեկ համատեքստում և ապահովել վերջիններիս կայուն զարգացման ինստիտուցիոնալ կարողություններ: Այդ առաջնահերթություններն են՝

II. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը յուրաքանչյուր համայնքի զարգացման հիմնաքարն է: Այն ոչ միայն գիտելիք և հմտություն է փոխանցում, այլ նաև նպաստում է պատասխանատու, նախաձեռնող և ստեղծարար քաղաքացիների ձևավորմանը: Համայնքում գործում են 9 միջնակարգ դպրոց, որտեղ սովորում է 3838 աշակերտ:

7 նախադպրոցական ուսումնական հաստատությունում հաճախում է թվով 735 երեխա, ինչպես նաև համայնքում գործում են նախակրթարաններ՝ Արևաշատ, Մուսալեռ և Բաղրամյան բնակավայրերում, որտեղ հաճախում է 32 սան: Համայնքում գործում են Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոցը՝ 327 սանով, և մարզադպրոցը՝ 120 սանով:

Նպատակների իրագործումն ապահովելու համար ուշադրություն է դարձվել այն խնդիրներին, որոնք ձևավորվել են տարիների ընթացքում և դրանց լուծումը կնպաստի ժամանակակից, ներառական և զարգացող կրթական համակարգի ստեղծմանը: Սույն ռազմավարությամբ սահմանված նպատակը կբավարարի համայնքի երեխաների և երիտասարդների կրթական պահանջները, կնպաստի նրանց կարողությունների լիարժեք զարգացմանը և կդառնա համայնքի երկարաժամկետ զարգացման կայուն հիմքը:

ՆՊԱՏԱԿԸ

Կրթական համակարգի զարգացման նպատակն է՝ նախադպրոցական և արտադպրոցական կրթության տարբեր ձևերի ու ուղղությունների զարգացման, ինչպես նաև հանրակրթական հաստատությունների և համայնքային ենթակայությամբ գործող ոլորտի տարբեր դերակատարների ակտիվ համագործակցության ապահովմամբ ապահովել Փարաքար համայնքի կայուն զարգացման հեռանկարները:

Ձևակերպված նպատակին հասնելու համար առաջիկա տարիներին առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խնդիր 1. Նախադպրոցական կրթության շենքային հնարավորությունների ընդլայնում:

Խնդիր 2. Հատուկ կարիքներով երեխաների ներառման համար բավարար պայմանների բացակայություն:

Խնդիր 3. Ուսուցիչների և դայակների վերապատրաստման պակաս՝ կրթական նոր մեթոդաբանությունների տիրապետման տեսանկյունից:

Խնդիր 4. Արտադպրոցական և մշակութային կրթության ոչ բավարար հասանելիություն և ուղղությունների և ձևերի ոչ բավարար քանակ:

Խնդիր 5. Դպրոց-համայնք համագործակցության ընդլայնման խթանում:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները՝ նախադպրոցական կրթության ոլորտում.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործողություն 1.1 Մանկապարտեզների նոր շենքերի կառուցում Մուսալեռ և Պտղունք բնակավայրերում:

Գործողություն 1.2 Գործող ՆՈՒՀ-երի վերանորոգում (5-ից 9-ը)՝ ջեռուցման, սանհանգույցների, խաղասենյակների, ննջասենյակների և սննդի որակի շարունակական բարելավում:

Գործողություն 1.3 Մանկավարժների, դայակների, հոգեբանների և լոգոպեդների ներգրավում և վերապատրաստում:

Գործողություն 1.4 Մանկապարտեզների տարածքներում անհրաժեշտ խաղահրապարակների բարեկարգում և վերազինում:

Գործողություն 1.5 Ծնողների համար սեմինարների անցկացում երեխաների զարգացման և դաստիարակության թեմայով:

Գործողություն 1.6 Մանկապարտեզների միջև համագործակցության խթանում:

Գործողություն 1.7 Հանրակրթության ոլորտում ստեղծել նոր համագործակցային հարթակներ համայնքային տարբեր կազմակերպությունների, մասնավոր հատվածի և դպրոցների միջև՝ կրթական, մշակութային և դաստիարակչական համատեղ ծրագրերի իրականացման նպատակով:

Գործողություն 1.8 Ներգրավել միջազգային կրթական կազմակերպություններ, դոնորներ և ՀԿ-ներ՝ դպրոցներում որակյալ կրթական միջավայր ապահովելու, ուսուցչական ներուժը զարգացնելու և տեխնիկական վերազինում իրականացնելու համար:

Գործողություն 1.9 Համայնքային բյուջեից հատկացվող կրթական միջոցների թափանցիկ օգտագործում:

Գործողություն 1.10 Զարգացնել մեխանիզմներ պետական, միջազգային և մասնավոր հատվածի միջև հավելյալ միջոցներ ներգրավելու համար՝ կրթական ենթակառուցվածքների զարգացման նպատակով:

Գործողություն 1.11 Աշակերտների խրախուսման համակարգի ձևավորում: Համայնքային բյուջեից հատկացումներ նախատեսել աշակերտների ուսումնական առաջադիմության խրախուսման նպատակով: Ըստ տարիքային խմբերի մշակել խրախուսման տարբերակներ՝ հաշվի առնելով երեխաների հետաքրքրությունները (գրքեր, մասնակցություն միջոցառումների, մրցանակներ, կրթական ճամփորդություններ և այլն):

Գործողություն 1.12 Արտադպրոցական կրթության ոլորտում նախատեսվում են հետևյալ գործողությունները՝

Գործողություն 1.13 Արտադասարանական խմբակների բազմազանեցում՝ ներգրավելով կամավորների և մասնագետների:

Գործողություն 1.14 Երիտասարդական խորհուրդների ստեղծում և համայնքային միջոցառումների կազմակերպում:

Գործողություն 1.15 Համագործակցություն քոլեջների և ուսումնարանների հետ՝ մասնագիտական ուղղվածության դասընթացների համար:

Գործողություն 1.16 Մասնագիտական կողմնորոշման ոչ ֆորմալ կենտրոնի հիմնում համայնքում:

Գործողություն 1.17 Մեծահասակների համար վերապատրաստման և շարունակական կրթության ծրագրերի իրականացում:

Գործողություն 1.18 Տաղանդավոր աշակերտների աջակցության ծրագրերի ստեղծում, հնարավոր կրթաթոշակների հատկացում:

Տեխնիկական գիտության և պրակտիկաների գծով սույն ռազմավարության նախաձեռնող խումբը Փարաքար համայնքը առաջիկա տարիներին դիտարկում է որպես կրթական ՀԱԲ:

2025թ Փարաքար համայնքում իր կրթական գործունեությունը կմեկնարկի ACT քոլեջը ՝ ծրագրավորում, թվային արվեստ, ինժեներություն և արտադրություն բաժիններով: Յուրաքանչյուր տարի քոլեջի սաները կհամալրվեն ևս 80–ով: Այստեղ համատեղվելու է տեխնոլոգիական արվեստը և ինժեներական միտքը՝ նպատակ ունենալով ձևավորել ապագայի մասնագետների նոր սերունդ: Քոլեջը մեծ դերակատարում է ունենալու համայնքի երիտասարդության համար որակյալ մասնագիտական կրթության հասանելիության ապահովման գործում, որն էլ կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստմանը:

III. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Սպորտը համայնքի սոցիալական, առողջապահական և մշակութային զարգացման հիմնասյուներից է: Ենթադրելի է, որ այն ոչ միայն նպաստում է բնակչության առողջ ապրելակերպի ձևավորմանը, ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանմանը, այլև հանդիսանում է համայնքային

համախմբվածության, փոխըմբռնման ու համագործակցության հզոր միջոց: Սպորտը կարևոր դեր ունի երեխաների և երիտասարդների համակողմանի զարգացման, կանոնների և պատասխանատվության զգացման ձևավորման գործում՝ միաժամանակ խթանելով համայնքի տարբեր սերունդների միջև կապը և հաղորդակցությունը:

Համայնքում սպորտային կյանքի զարգացումը մեծապես պայմանավորված է համապատասխան ենթակառուցվածքների առկայությամբ, հնարավորությունների հավասարաչափ հասանելիությամբ և զանգվածային ներգրավվածության խթանմամբ: Դրա շնորհիվ ձևավորվում է ոչ միայն առողջ, այլև ակտիվ և ներգրավված քաղաքացիական հասարակություն, որն իր ներդրումն է ունենում համայնքի ընդհանուր առաջընթացում:

ՆՊԱՏԱԿԸ

Սույն ռազմավարության տեսանկյունից նպատակ ենք հետապնդում խթանելով սպորտի տարբեր ձևերի ընդգրմամբ ապահովել Փարաքար համայնքի բնակչության առողջ ապրելակերպի ու սպորտային կյանքի զարգացումը:

ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերը նշված նպատակին հասնելու համար, առաջարկվում է անդրադառնալ հետևյալ խնդիրներին՝

Խնդիր 1. Սպորտային ենթակառուցվածքների անբավարար վիճակ և անհամաչափ բաշխվածություն

Խնդիր 2. Ֆիզիկական ակտիվության ցածր մակարդակ բնակչության շրջանում

Խնդիր 3. Հատուկ կարիքներ ունեցող անձանց համար սպորտում մատչելիության պակաս

Խնդիր 4. Մարզակառույցների և միջոցառումների սահմանափակ հարմարեցվածությունը խոչընդոտում է ներառական մասնակցությունը:

Խնդիր 5. Մանկապատանեկան սպորտի թերի զարգացում

Խնդիր 6. Մարզական գույքի և սարքավորումների սահմանափակություն

Խնդիր 7. Մասնավոր ներդրումների և համայնքային միջոցների ներգրավման դժվարություններ

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները՝

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործողություն 1.1 Մարզական ենթակառուցվածքների բարելավում և հասանելիություն, հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող անձանց հասանելիության պահանջները:

Գործողություն 1.2 Գործող մարզադահլիճներն ու մարզադաշտերի վերանորոգում:

Գործողություն 1.3 Սպորտային մրցումների ինչպես նաև ներհամայնքային և միջհամայնքային մրցույթների կազմակերպում:

Գործողություն 1.4 Բնակելի տարածքներում կառուցել և վերանորոգել բացօթյա խաղահրապարակներ ու տեղադրել ժամանակակից մարզասարքեր՝ բնակիչների ամենօրյա ֆիզիկական ակտիվության համար:

Գործողություն 1.5 Սպորտային միջոցառումների պարբերական կազմակերպում, անցկացնել ներհամայնքային և միջհամայնքային ֆուտբոլի, շախմատի, շաշկու մրցումներ, սպորտլանդիաներ և այլ սպորտային միջոցառումներ՝ դպրոցականների, երիտասարդների և տարեցների ներգրավմամբ:

Գործողություն 1.6 Իրականացնել առողջ ապրելակերպի քարոզարշավներ, բաց դասեր, արշավներ և մարզումներ՝ բնակիչների շրջանում ֆիզիկական ակտիվության մշակույթ ձևավորելու համար:

Գործողություն 1.7 Զարգացնել ծրագրեր, որոնց միջոցով հաշմանդամություն ունեցող անձինք կարող են լիարժեք ներգրավվել սպորտային խմբակներում և միջոցառումներում:

Գործողություն 1.8 Աջակցել մանկապատանեկան սպորտային նոր խմբակների ստեղծմանն ու զարգացմանը:

Գործողություն 1.9 Համագործակցել դպրոցների հետ՝ ավելացնելով երեխաների մասնակցությունը մարզական ակումբներին և մրցումներին:

Գործողություն 1.11 Տարբեր դոնորական միջոցներից և համայնքային բյուջեից ձեռք բերել մարզական հանդերձանք, գույք և մարզասարքեր՝ դպրոցների և մարզական կենտրոնների համար:

Գործողություն 1.12 Համայնքի բյուջեից նախատեսել մրցանակներ, կրթաթոշակներ կամ այլ խրախուսական մեխանիզմներ՝ համայնքը ներկայացնող և հաջողություններ գրանցած մարզիկների համար:

IV. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրում զբոսաշրջությունը դիտարկվում է որպես կարևոր ռազմավարական ուղղություն, որը կարող է դառնալ տնտեսական աճի, աշխատատեղերի ստեղծման, ենթակառուցվածքների բարելավման և մշակութային ժառանգության պահպանման շարժիչ ուժ: Փարաքար համայնքը մեծ ուշադրություն է դարձնում պատմամշակութային վայրերի և կոթողների պահպանմանը: Համայնքում գործող եկեղեցիները աչքի են ընկնում իրենց բազմադարյա պատմությամբ, գրավչությամբ, շքեղությամբ: Փարաքար համայնքը կարող է վերածվել զբոսաշրջային կարևոր տարածքի ի շնորհիվ հյուրանոցային տնտեսության: Հյուրանոցային տնտեսության համար Փարաքար համայնքի Փարաքար, Թաիրով, Մոաալեռ բնակավայրերը հատկապես ունեն մի շարք առավելություններ, քանի որ գտնվում են շատ մոտ «Զվարթնոց» օդանավակայանին և Երևանի և էջմիածնի կենտրոնում: Փարաքար համայնքով է անցնում Երևան-էջմիածին մայրուղին, որոնք երկուսն էլ ՀՀ զբոսաշրջային խոշոր կենտրոններ են: Համայնքում նախատեսվող քայլերը միտված են ինչպես տուրիզմի ենթակառուցվածքների զարգացմանը, այնպես էլ համայնքը միջազգային զբոսաշրջային քարտեզի վրա ավելի ճանաչելի դարձնելուն:

ՆՊԱՏԱԿԸ

Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային քարտեզում ապահովել ներկայանալի տեղ ապահովելով զբոսաշրջության կայուն ենթակառուցվածքներ:

Զբոսաշրջության ոլորտում առանձնացվել են հետևյալ խնդիրներ՝

ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խնդիր 1. Զբոսաշրջային տեղեկատվության բացակայություն կամ չհամակարգված ներկայացում:

Խնդիր 2. Պատմամշակութային կոթողների և տեսարժան վայրերի անբավարար հասանելիություն և ճանաչելիություն:

Խնդիր 3. Հասարակական ենթակառուցվածքների՝ ճանապարհների, զուգարանների, ինտերնետային կապի, ընդհանուր բարեկարգման պակաս:

Խնդիր 4. Տեղական արտադրողների, ձեռնարկությունների և համայնքային ընտանիքների ներգրավվածության ցածր մակարդակ:

Խնդիր 5. Հյուրանոցային և զբոսաշրջիկներին ուղղված ենթակառուցվածքների ոչ բավարար զարգացում:

Նոր ծրագրերի իրականացմամբ զբոսաշրջության զարգացման ապահովման համար նախատեսվում են ստորև շարադրվող գործողությունները՝

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործողություն 1.1 Համայնքի պատմամշակութային վայրերի և տեսարժան վայրերի քարտեզների, ուղեցույցների և բրոշյուրների ստեղծում:

Գործողություն 1.2 Տեղեկատվական ցուցանակների տեղադրում համայնքի տարբեր, հատկապես մուտքային և ելքային հատվածներում:

Գործողություն 1.3 Մասնակցություն տեղական և միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների:

Գործողություն 1.4 Համայնքում փառատոնների, տոնական միջոցառումների և զբոսաշրջիկների համար նախատեսված իրադարձությունների կազմակերպում:

Գործողություն 1.5 Համագործակցություն ԶԼՄ-ների, բլոգերների և տուրիստական կազմակերպությունների հետ՝ համայնքի ճանաչելիությունն ավելացնելու նպատակով:

Գործողություն 1.6 Գյուղական բնակավայրերում հյուրընկալ ընտանիքների ներգրավում և գյուղական տուրիզմի խթանում:

Գործողություն 1.7 Տեղական արտադրողների և ձեռնարկությունների ընդգրկում զբոսաշրջային շղթայի մեջ:

Գործողություն 1.8 Համայնքի ընդհանուր բարեկարգում՝ կանաչապատում, նոր զբոսայգիների ստեղծում:

Գործողություն 1.9 Ճանապարհների վերանորոգում և հասանելիության ապահովում:

Գործողություն 1.10 Հանրային զուգարանների տեղադրում և անվճար ինտերնետի հասանելիության ապահովում հանրային վայրերում:

Գործողություն 1.11 Հյուրատների և փոքր հյուրանոցների ստեղծման խթանում՝ հնարավոր դոնորների և ներդրողների ներգրավմամբ:

Գործողություն 1.12 Առցանց հարթակի ստեղծում՝ համայնքի տեսարժան վայրերի, ծառայությունների և հնարավորությունների ներկայացման համար:

Գործողություն 1.13 Սպորտային համալիրների և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում՝ հատուկ հետաքրքրություն ներկայացնող զբոսաշրջիկների համար:

Գործողություն 1.14 Արտաքին կապերի ընդլայնում՝ տարբեր երկրների ներդրումների և փորձի փոխանակման միջոցով:

V. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Ենթադրելի է, որ երիտասարդները պետք է լինեն համայնքի ամենաակտիվ, դինամիկ և ստեղծարար շերտը: Նրանց մասնակցությունը համայնքային կյանքին կենսական նշանակություն ունեն համայնքի կայուն զարգացման, նորարարության և հասարակական ակտիվության բարձրացման տեսանկյունից այն կարևոր միջոց է, որն անհրաժեշտ է բացահայտել, խթանել և ուղղորդել համայնքի բարելավման ուղղությամբ:

Սակայն, ներկայումս համայնքում չեն գործում ֆորմալ և ոչ ֆորմալ երիտասարդական խմբեր, որոնք ներգրաված կլինեն համայնքի կառավարման գործերին, ինչը բացասաբար է ազդում երիտասարդների ներգրավվածության և համայնքի զարգացման գործընթացներին վերջիններիս մասնակցության վրա:

Համայնքի երիտասարդները՝ դրանք ուսանողներ են, ովքեր ուսուցանվում են մայրաքաղաքի տարբեր բուհերում, դպրոցի ավագ դասարանների աշակերտներն են, իսկ որոշները ինքնազբաղ անձինք են ներգրաված հանրային կյանքի տարբեր ոլորոտներում: Վերջիններիս հետաքրքրությունների, շահերի բացահայտման և դրանց շուրջ երիտասարդներին համախմբման նպատակով նախաձեռնել ենք ձևավորել երիտասարդների ակտիվ խումբ կամ խմբեր, որոնց առանցքի շուրջ էլ տեսնում ենք համայնքային իշխանություն–երիտասարդություն ակտիվ և գործուն կապը: Երիտասարդների ներգրավվածության, երիտասարդների կազմակերպված և շարունակական մասնակցությունն ու ներկայացվածությունը, նպատակահարմար է հիմնել երիտասարդական խումբ, որը կդառնա համայնքի երիտասարդների միավորման, նախաձեռնությունների ձևավորման և համագործակցության հիմնական հարթակը:

ՆՊԱՏԱԿԸ

Սույն ռազմավարության տեսանկյունից նպատակ ենք հետապնդում համայնքային խնդիրների բացահայտման և կառավարման հարաճուն գործառույթներում բարձրացնել երիտասարդների մասնակցության և ակտիվ ներգործության մակարդակը երիտասարդական ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի ձևավորման և կայացման միջոցով:

Վերը նշված նպատակին հասնելու համար, առաջարկվում է անդրադառնալ հետևյալ խնդիրներին՝

ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խնդիր 1. Երիտասարդների հետաքրքրությունների և շահերի միասնական արտահայտման կառույցների, հարթակի բացակայություն:

Խնդիր 2. Երիտասարդների պասիվությունը համայնքային գործերին

Խնդիր 3. Համագործակցություն և ցանցային կապերի բացակայություն

Խնդիր 4. Երիտասարդական տաղանդների բացահայտման և ուղղորդման հարթակների և նախաձեռնությունների ոչ բավարար քանակ

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ քայլերն ու գործողությունները՝

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործողություն 1.1 Ստեղծել համայնքային երիտասարդական նախաձեռնությունների խումբ:

Գործողություն 1.2 Ներգրավել տարբեր սերունդների երիտասարդներ՝ ապահովելով ներառականություն:

Գործողություն 1.3 Խմբի աշխատանքները կարգավորել կանոնադրությամբ:

Գործողություն 1.4 Կազմակերպել սեմինարներ, աշխատարաններ և տեղեկատվական հանդիպումներ՝ քաղաքացիական կրթության, ինքնակառավարման, իրավունքների և պարտականությունների թեմաներով:

Գործողություն 1.5 Համագործակցել համայնքապետարանի, դպրոցների և այլ կառույցների հետ:

Գործողություն 1.6 Խրախուսել երիտասարդներին մասնակցել համայնքային միջոցառումներին, կամավորական ծրագրերին, համայնքապետարանի նիստերին:

Գործողություն 1.7 Աջակցել երիտասարդների կողմից առաջարկվող նախագծերի իրականացմանը՝ համայնքի զարգացման համար:

Գործողություն 1.8 Հիմնել կապեր այլ համայնքների երիտասարդական խմբերի հետ՝ փորձի փոխանակման, համատեղ նախագծերի իրականացման նպատակով:

Գործողություն 1.9 Դիմել պետական և միջազգային դրամաշնորհային ծրագրերի՝ երիտասարդական նախաձեռնությունների ֆինանսավորման համար:

Գործողություն 1.10 Հնարավորություն ստեղծել երիտասարդներին՝ ներկայացնելու իրենց ստեղծագործական, տեխնիկական և այլ կարողությունները (ցուցահանդեսներ, մրցույթներ, ֆորումներ և այլն):

Գործողություն 1.11 Աջակցել մասնագիտական կողմնորոշման ծրագրերին:

VI. ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթը համայնքի ինքնության, էթնիկ և սոցիալական ժառանգության և համախմբվածության հիմնական հիմնասյունն է: Հավանական է, որ այն արտահայտում է համայնքի պատմական հիշողությունը, արժեքները, ստեղծարար ներուժը և հասարակական կապերը: Փարաքար համայնքում մշակութային կյանքի զարգացումը նպատակ ունի խթանել բնակչության մշակութային ակտիվությունը, վերականգնել և պահպանել ազգային և տեղական ավանդույթները, աջակցել ստեղծագործական երիտասարդությանը և ապահովել բնակչության լայն ներգրավվածությունը մշակութային միջոցառումներին: Ձեռնարկված միջոցառումները կբարելավեն բնակիչների մշակութային կյանքին ակտիվ մասնակցությունը, կպահպանեն համայնքային մշակութային ժառանգությունը և կխթանեն բնակավայրերի միջև մշակութային ներուժի հավասար բաշխումն ու զարգացումը:

Սույն ռազմավարության շրջանակում նախատեսվում է բարելավել մշակութային ենթակառուցվածքները, կազմակերպել համայնքային փառատոններ, ցուցահանդեսներ, ինչպես նաև խրախուսել համայնքի ստեղծագործ անհատներին: Կարևորվում է նաև համայնքի մշակութային ժառանգության թվայնացումն ու տարածումը, ինչպես նաև սերտ համագործակցությունը տեղական և միջազգային կրթական հաստատությունների և մշակութային կազմակերպությունների հետ:

Հակիրճ ներկայացվում է Փարաքար համայնքում գործող տարբեր մշակութային կազմակերպությունների և անհատ ստեղծագործողների մասին տեղեկատվություն:

«Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոց»-ը, որը հանդիսանում է մշակութային կրթության կարևոր կենտրոն, այն ունի շուրջ 360 սան և 10 մասնագիտացված բաժին, որտեղ երեխաները և պատանիները ստանում են դասական և ժամանակակից արվեստի ուղղությամբ բազմակողմանի կրթություն:

Բացի այդ, համայնքում ակտիվ գործունեություն են իրականացնում 7 մշակույթի տներ, որոնց շրջանակում կազմակերպվում են տարբեր խմբակներ՝

նպաստելով բնակիչների ստեղծագործական ինքնարտահայտմանն ու համայնքային մշակութային կյանքի հարստացմանը:

h/h	Տեղակայման վայրը	Խմբակի մշակութային ուղղությունը	Սաների քանակը
1.	ՓԱՐԱՔԱՐ	Նկարչություն	30
2.	ՓԱՐԱՔԱՐ	Ժամանցային խմբակ	19
3.	ՓԱՐԱՔԱՐ	Շախմատ	25
4.	ՓԱՐԱՔԱՐ	Պար	85
5.	ՓԱՐԱՔԱՐ	Հելունագործ	5
6.	ԹԱԻՐՈՎ	Պար	37
7.	ԹԱԻՐՈՎ	Ժամանցային խմբակ	17
8.	ԹԱԻՐՈՎ	Անգլերեն	10
9.	ԹԱԻՐՈՎ	Անգլերեն	5
10.	ԹԱԻՐՈՎ	Մենթալ	5
11.	ԹԱԻՐՈՎ	Նկարչություն	8
12.	ՆՈՐԱԿԵՐՏ	Նկարչություն	19
13.	ՆՈՐԱԿԵՐՏ	Դհոլ-Հայասա	7
14.	ՆՈՐԱԿԵՐՏ	Պար	10
15.	ՆՈՐԱԿԵՐՏ	Դաշնամուր	2
16.	ԲԱՂՐԱՄՅԱՆ	Դհոլ- Հայասա	12
17.	ԲԱՂՐԱՄՅԱՆ	Նկարչություն	10
18.	ԲԱՂՐԱՄՅԱՆ	Պար-Ծաղկեվանք	11
19.	ԲԱՂՐԱՄՅԱՆ	Պար-Անդի	9
20.	ԲԱՂՐԱՄՅԱՆ	Ամառային դպրոց	6
21.	ԲԱՂՐԱՄՅԱՆ	Շախմատ	4
22.	ԲԱՂՐԱՄՅԱՆ	Կարատե	13
23.	ԱՐԵՎԱՇԱՏ	Նկարչություն	4
24.	ԱՐԵՎԱՇԱՏ	Պար-Ամիլա	23

25.	ԱՐԵՎԱՇԱՏ	Պար	7
26.	ԱՐԵՎԱՇԱՏ	Կարատե	7
27.	ԱՐԵՎԱՇԱՏ	Հելունագործություն	4
28.	ՄԵՐՁԱՎԱՆ	Պար-Անուրջ	11
29.	ՄԵՐՁԱՎԱՆ	Պար-Փայլող Աստղեր	30
30.	ՄԵՐՁԱՎԱՆ	Նկարչություն	27
31.	ՄԵՐՁԱՎԱՆ	Գոբելեն	8
32.	ՄԵՐՁԱՎԱՆ	Պար	8
33.	ՄԵՐՁԱՎԱՆ	Դհոլ	7
34.	ՄԵՐՁԱՎԱՆ	Շախմատ	5
35.	ԱՅԳԵԿ	Մարմնամարզություն	4
36.	ԱՅԳԵԿ	Կարատե	16
37.	ԸՆԴԱՄԵՆԸ		564

Ինչպես երևում է վերը ներկայացված աղյուսակից Փարաքար համայնքում գործող մշակութային խմբակները աչքի չեն ընկնում իրենց բազմազանությամբ և սաների մեծաքանակ ընդգրկմամբ: Ուստի անհրաժեշտ են ձեռնարկել արմատական փոփոխություններ մշակույթը յուրաքանչյուր ընտանիքին հասցնելու նպատակով: Խնդիր է նաև այն իրողությունը, որ ոչ բոլոր միջոցառումներն են կրում մասսայական ներկայացուցչություն, քանզի համայնքային միջոցառումներում բնակչության ներկայացուցչությունը սակավաթիվ է:

ՆՊԱՏԱԿԸ

Մեր նպատակն է՝ նոր ուղղությունների, խմբակների ձևավորմամբ և սաների ընդգրկմամբ, ինչպես նաև տարաբնույթ մշակութային միջոցառումների կազմակերպմամբ ապահովել Փարաքար համայնքի բնակչության մշակութային պահանջմունքը, ապահովելով տեղական արհեստավարժ մասնագիտական միջոցի կարողությունները:

Գաղտնիք չէ, որ մարզային երիտասարդությունը հատկապես ձգտում է մայրաքաղաքային մշակությանին օջախներում բավարարել սեփական

պահանջմունքները: Սույն ռազմավարության կիրարկումը հնարավորություն կստեղծի վերը նկարագրված պահանջմուքները մասամբ բավարարել սեփական բնակավայրերում:



Վերոնշյալ նպատակի իրագործման համար անհրաժեշտ է դիտարկել հետևյալ առաջնահերթ խնդիրները.

ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խնդիր 1. Մշակույթի տների և գրադարանների, արվեստի դպրոցի ֆիզիկական պայմանների անմխիթար վիճակ

Խնդիր 2. Երաժշտական մի շարք գործիքների բացակայություն

Խնդիր 3. Ջեռուցման և հովացման համակարգերի բացակայություն

Խնդիր 4. Կահույքի և տեխնիկական միջոցների պակաս

Խնդիր 5. Համայնքային այգիների և հարակից տարածքների անմխիթար վիճակ

Խնդիր 6. Համատեղելիության խնդիրներ

Սույն խնդիրների լուծման համար պլանավորված են հետևյալ գործողությունները

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործողություն 1.1 Տանիքների, առաստաղների, պատուհանների և դահլիճների կոսմետիկ և կառուցվածքային վերանորոգում (Մուսալեռ, Արևաշատ, Պտղունք, Նորակերտ, Այգեկ, Մերձավան, «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ):

Գործողություն 1.2 Սանհանգույցների կառուցում մշակութային կենտրոնների ներսում:

Գործողություն 1.3 Արևային էներգիայով աշխատող ջեռուցման և հովացման համակարգերի տեղադրում մշակույթի տներում (Նորակերտ, Բաղրամյան, Մերձավան):

Գործողություն 1.4 Էլեկտրալարերի փոխարինում և համակարգերի նորացում (Մուսալեռ, Մերձավան):

Գործողություն 1.5 Պատվանդանների, աստիճանների և այգիների վերանորոգում, ոռոգման համակարգերի նորացում, սևահողի տրամադրում և կանաչապատում (Արևաշատ, Մերձավան, Մուսալեռ):

Գործողություն 1.6 Հողատարածքների սեփականաշնորհման, նվիրաբերության կամ փոխանցման գործընթացների կազմակերպում՝ համայնքային օգտագործման նպատակով (Պտղունք):

Գործողություն 1.7 Վարագույրների, սեղանների (շախմատային և այլն), հանդերձարանների ապահովում պարային և կրթական խմբերի համար (Բաղրամյան, Մերձավան):

Գործողություն 1.8 Մշակույթի տան և բուժամբուլատորիայի համատեղման հարցի ուսումնասիրում՝ ֆունկցիոնալ բաշխման նպատակով (Նորակերտ):

VII. ԱՂԵՏՆԵՐԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ենթադրելի է, որ համայնքի կայուն, անվտանգ և պաշտպանված զարգացման հիմքում պետք է լինի աղետների և ռիսկերի կառավարման համակարգված մոտեցումը: Բնական և մարդածին աղետները՝ երկրաշարժը, սելավները, հրդեհները, տեխնածին վթարները, ինչպես նաև կլիմայական փոփոխությունները

կարող են լուրջ սպառնալիք հանդիսանալ ոչ միայն մարդկանց կյանքի, այլև համայնքի տնտեսական, բնապահպանական և մշակութային հենքերի վրա:

Ինչպես հանրային կյանքը կարգավորող մնացած ոլորտներում, այնպես էլ աղետների և ռիսկերի կառավարման ոլորտում ներկայումս մեր համայնքում անելիքները շատ են և մշտապես ուշադրության արժանի:

Քաղաքացիական բնակչության, գյուղատնտեսական կենդանիների, ինչպես նաև մշակութային արժեքների տարահանման գործառույթները անհրաժեշտությամբ պայմանավորված իրավիճակներում սահուն և անցնցում իրագործելու համար անհրաժեշտ է բնակչության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագիր ունենալ:

Համայնքի բնակիչները՝ այդ թվում երեխաներ, տարեցներ և հատուկ խնամքի կարիք ունեցող անձինք, առավել խոցելի են աղետների ժամանակ, իսկ գյուղատնտեսական ոլորտում ներգրավված ընտանիքները կանգնած են մթերքների և կենդանիների կորստի ռիսկի առջև: Մշակութային արժեքները՝ հուշարձանները, կրոնական և պատմամշակութային կառույցները նույնպես ենթարկվում են վտանգի:

Առանձնակի կարևորություն ունեն մշակութային արժեքների հաշվառումն ու վերջիններիս նկատմամբ մոնիթորինգային պլանների առկայությունն ու գործարկումը: Սա նույնպես առաջնահերթություն է դիտարկվում սույն ռազմավարության համատեքստում քաղաքացիական բնակչության տարահանման աշխատանքներում:

Գյուղատնտեսական կենդանիների տարահանման անհրաժեշտության պարագայում, անհրաժեշտ կլինի մշակել երթուղիները, պլանավորել միջանկյալ կերակրման և ջրման կարողությունները, ապահովել ուղեկցող անձանց և անասնաբուժական անձնակազմեր, ինչպես նաև վերջնակետում ունենալ կենդանիներին խնամքի անհրաժեշտ պարագաներ և պայմաններ:

Ուստի, աղետների և ռիսկերի կառավարման բաղադրիչը դիտվում է որպես ռազմավարական ուղղություն, որի նպատակն է ձևավորել դիմակայուն համայնք՝ պատրաստ վտանգներին, հստակ արձագանքման մեխանիզմներով, ամբողջական

համակարգով, որտեղ պաշտպանված են ոչ միայն մարդիկ, այլև կենսաապահովման հիմնական օղակները:

Այս համատեքստում կարևորվում են նաև քաղաքացիական բնակչությանը անհատական պաշտպանության միջոցներով զինելու, վերջիններիս ժամանակավոր պատսպարման համար ինժեներական հնարավորությունների բարելավման աշխատանքները:

Որպես առաջնահերթություն, սույն ռազմավարությունը դիտարկում է նաև պարենային և կենսաբանական անվտանգության, ինժեներական, հակահրդեհային, որոնողական աշխատանքների և այլ ծառայությունների ձևավորված խմբերի արհեստավարժության բարձրացմանն ուղղված սեմինարների, վարժանքների, դասախոսությունների կազմակերպումն ու իրականացումը:

ՆՊԱՏԱԿԸ

Ապահովել Փարաքար համայնքի անվտանգությունը ցանկացած բնական թե տեխնածին աղետների հնարավոր դեպքում:

Վերը նկարագրվածի տրամաբանությամբ դիտարկվում են հետևյալ խնդիրները՝

ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խնդիր 1. Աղետների և ռիսկերի կառավարման համակարգված մոտեցման մշտական արդիականացման պրակտիկաների անբավարարություն:

Խնդիր 2. Բնակչության շրջանում առկա է պատրաստվածության և իրազեկման ցածր մակարդակ:

Խնդիր 3. Համայնքային ենթակայությամբ և տարածքում գործող կազմակերպությունների ԱՌԿ պլանների ներդաշնակեցման ոչ բավարար իրավիճակ:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողություններն ու քայլերը.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործողություն 1.1. Իրականացնել համայնքային ռիսկերի նախնական գնահատում և աղետների քարտեզագրում՝ ներառելով գյուղատնտեսական, մշակութային և բնակելի գոտիները:

Գործողություն 1.2. Ստեղծել համայնքային ԱՌԿ համակարգող խումբ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործողություն 1.3. Վերամշակել և համապատասխան հաստատման ներկայացնել աղետներին արձագանքման պլան, որը կներառի.

Գործողություն 1.4. Քաղաքացիական բնակչության տարհանման ուղիներ և վայրեր,

Գործողություն 1.5. Գյուղատնտեսական կենդանիների ժամանակավոր տեղակայման սցենարներ,

Գործողություն 1.6. Մշակութային արժեքների պահպանման միջոցառումներ (դրանց փաստագրում, փաթեթավորում և տեղափոխում):

Գործողություն 1.7. Կազմակերպել ուսուցողական սեմինարներ և գործնական վարժանքներ համայնքի բնակիչների, աշակերտների, ավագների, և գյուղացիական տնտեսությունների մասնակցությամբ:

Գործողություն 1.8. Ամրապնդել կապը ԱԻՆ-ի, մարզպետարանի և միջազգային կազմակերպությունների հետ՝ համատեղ նախաձեռնությունների իրականացման նպատակով:

- Գործողություն 1.9. Ստեղծել կամ հարմարեցնել տարհանման կետեր՝ ապահովելով խմելու ջրի, առաջին բուժօգնության, սննդի և կենսական այլ կարիքների հասանելիություն:
- Գործողություն 1.10. Զարգացնել տեղեկատվական համակարգ՝ տեղական ռիսկերի և անվտանգության միջոցառումների մասին պարբերական հաղորդակցմամբ:
- Գործողություն 1.11. Գործարկել համայնքային մակարդակով տարեկան վարժանքներ՝ իրական աղետային սցենարներով, մասնավորապես բնակչության տարհանման և կենդանիների պաշտպանության ուղղությամբ:

Այս գործողությունների արդյունքում ակնկալվում է, որ Փարաքար համայնքը կունենա կանխատեսելի, պատրաստ և արձագանքող համակարգ, որտեղ մարդու կյանքը, ունեցվածքը, գյուղատնտեսությունը և մշակույթը պաշտպանված են աղետներից: Համայնքն իր մասնակցային մեխանիզմներով կմեծացնի սեփական դիմակայունության մակարդակը հնարավոր ճգնաժամային իրավիճակում:

VIII. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքում գործում է համայնքային ենթակայության 6 բուժամբուլատորիա և 3 բուժմանկաբարձական կետ: Դրանք են՝

ՀՀ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1.	Փարաքարի ԲԱ ՀՈԱԿ
2.	Թաիրովի ԲԱ ՀՈԱԿ
3.	Բաղրամյանի ԲԱ ՀՈԱԿ
4.	Նորակերտի ԲԱ ՀՈԱԿ
5.	Մուսալեռի ԲԱ ՀՈԱԿ
6.	Մերձավանի ԲԱ ՀՈԱԿ
7.	Այգեկի ԲՄԿ
8.	Արևաշատի ԲՄԿ
9.	Պտղունքի ԲՄԿ

Ինչպես երևում է վերը ներկայացված աղյուսակից համայնքի բոլոր գյուղերում առկա է բուժօգնության որոշակի հասանելիություն: Այնինչ ոչ բոլոր բուժհաստատություններն են, որ ունեն համապատասխան շենքային պայմաններ: Համայնքում գործող առաջնային առողջություն ապահովող հիմնարկները թերի են

համալրված բուժ սարքավորումներով, որոնց բացակայությունը խաթարում է բնակչության լիարժեք բուժ սպասարկումից: Վերը նկարագրված խնդիրներին զուգահեռ անհրաժեշտ է համարվում նաև նորագույն կահույքով բուժ հաստատությունները կահավորելը:

Չնայած նրան, որ Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի համաձայն համայնքի ղեկավարը ունի սահմանափակ լիազորություններ առողջապահության ոլորտում, այնուամենայնիվ սույն ռազմավարության մշակման հեղինակի կողմից նախորդիվ կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են հետևյալ հիմնահարցերը, որոնցից առաջնահերթության կարգով առանձնացվել են ստորև ներկայացվողները:

ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

1. Բուժամբուլատորիաների վերանորոգում՝ ավելի հասանելի և որակյալ առաջնային բուժօգնության տրամադրելու ակնկալիքով:

2. Բուժմանկաբարձական կետերի և բուժամբուլատորիաների վերազինում նորագույն բժշկական սարքավորումներով և տեխնիկայով:

3. Բուժմանկաբարձական կետերի և բուժամբուլատորիաների վերազինում կահույքով:

2025-2030 թվականների ընթացքում համայնքային իշխանությունները ստանձնել են բոլոր բուժ հաստատությունների վերանորոգման, սարքավորումներով զինման և կահավորման աշխատանքներ:

IX. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Հասարակության սոցիալական պաշտպանությունը յուրաքանչյուր իշխանության գլխավոր գործառույթներից մեկն է: Սոցիալական ապահովության բնագավառում Փարաքարի համայնքապետարանի ռազմավարությունն ուղղված է քաղաքացիների սոցիալական շահերի պաշտպանությանը, սոցիալական ռիսկերի արդյունավետ կառվարմանը, դրանց հնարավոր նվազեցմանը: Սոցիալական պաշտպանությունը հանդիսանում է նպատակային սոցիալական

քաղաքականության ազդեցիկ գործիք համայնքում կայուն սոցիալական միջավայրի ձևավորման համար: Սոցիալական պաշտպանության համակարգի համար անհրաժեշտ կարևոր գործոն է կայուն և զարգացող տնտեսությունը:

Համայնքում առկա են բնակարանների և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներ, որոնց մի մասը կազմում է զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքները:

Արցախյան պատերազմների ընթացքում վիրավորում ստացած զինծառայողները, զոհվածների, անհետ կորածների ընտանիքները և նորակոչիկները ևս Փարաքարի համայնքապետարանի ուշադրության առանցքում են և համայնքի, բարեգործական հիմնադրամների, անհատ բարերարների կողմից իրականացվում են մի շարք աջակցության ծրագրեր, որոնք հետայսու ևս կշարունակվեն:

Հաշվի առնելով համայնքում աղքատության մակարդակը, Արցախյան պատերազմների հետևանքները և այն հանգամանքը, որ հասարակության կարիքավոր խավն է ենթարկվում առավել մեծ ռիսկերի, Փարաքար համայնքի զարգացման 2025 թվականի ծրագրում նախատեսվում է պետական և համայնքային սոցիալական ծրագրերն ուղղված են լինելու ռիսկերի կանխարգելմանը՝ ընտանիքի աղքատության, հաշմանդամության, հիվանդության, ծնողազրկության իրավիճակներում հայտնվելու և այլ պատճառների հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց աջակցությանը՝ դժվարությունները ինքնուրույն հաղթահարելու կամ իրավիճակը բարելավելու նպատակով:

Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների մասնակիցների Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միակողմանի ծնողազուրկ ընտանիքի և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները:

Սոցիալական կարիքների բացահայտման և լուծումների կառավարման նպատակով համայնքներում գործում է սոցիալական աշխատողի պաշտոնը: Սոցիալական աշխատանքի դերը, բովանդակությունը, ինչպես նաև լիազորությունների շրջանակը ավելի հստակ սահմանելու համար գնալով ավելի հրատապ և արդիական է դառնում սոցիալական ծառայությունների ինտեգրումը:

Սույն ռազմավարության մշակման ժամանակահատվածում Փարաքար համայնքի սոցիալ–ժողովրդագրական պատկերը ներկայացվում է ստորև.

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ - ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՀՀ	Սոցիալ–ժողովրդագրական կարգավիճակը	թվաքանակը
1	Բնակչության թվաքանակը, որից	29932
1.1	Արական	14903
1.2	Իգական	15029
2	Երեխաների թիվը	7256
3	Գործազուրկների, որից՝	450
3.1	Կանայք	402
4	Աշխատանք փնտրող անձանց թիվը, որից՝	136
4.1	Կանայք	59
5	Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը	104
6	Հաշվառված հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը	12
7	Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում 28.01 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների թիվը	285
8	Բազմազավակ ընտանիքների թիվը /4 և ավել երեխա ունեցող ընտանիքների թիվ/	58
9	Միայնակ բնակվող տարեցների թիվը	156
10	Անժառանգ տարեցների թիվը	103

11	Միակողմանի ծնողազուրկ ընտանիքների թիվը / ՄՄԾ-ում գրանցված ծնողներից մեկին կորցրած ընտանիքները/	18
12	Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների թիվը	51
13	Տեղահանված,փախստական կամ ապաստան հայցող անձանց կամ ընտանիքների թիվը	217
14	Կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը	0
15	Ընտանեկան կամ կենցաղային բռնության դեպքեր	2
16	Հրատապ արձագանք պահանջող իրավիճակներից (այդ թվում՝ արտակարգ կամ ռազմական) տուժած անձանց կամ ընտանիքների թիվը	217
17	Հոգեկան կամ մտավոր առողջության խնդիր ունեցող անձանց թիվը ընդամենը, որից՝	92
18	Երեխաներ	16

Հատուկ ուշադրության են արժանանում համայնքի հաշմանդամություն ունեցող բնակիչները: Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ձևավորումն ու աստիճանական ինտեգրման ապահովումը համայնքային իշխանությունների առաջնահերթությունն է: Ներկայումս համայնքում հաշվառված են ստորև աղյուսակի միջոցով ներկայացված հաշմանդամները՝

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

ՀՈՀ	Բնակավայր	Հաշմանդամություն	Հաշմանդամությ

		ունեցող անձինք /0-18 տարեկան/	ուն ունեցող անձինք /18-ից բարձր/
1.	Փարաքար	25	163
2.	Թաիրով	7	73
3.	Մուսալեռ	5	74
4.	Արևաշատ	5	48
5.	Պտղունք	6	36
6.	Մերձավան	7	59
7.	Այգեկ	4	41
8.	Նորակերտ	8	100
9.	Բաղրամյան	2	103
Ընդամենը		69	697

Ինչպես ակնհայտ է դառնում վերը ներկայացված աղյուսակից Փարաքար համայնքում 18–ից բարձր տարիք ունեցող հաշմանդամություն ունեցող անձինք շուրջ 10 անգամ գերազանցում են մինչև 18 տարեկան հաշմանդամներից:

Ստորև ներկայացվում է վերջիններիս տեղաբաշխվածությունը ըստ գյուղերի և տարիքային խմբերի.



Արցախյան 2023 թվականի պատերազմի հետևանքով զգալի փոփոխություններ տեղի ունեցան Փարաքար համայնքի բնակչության թվաքանակում, առաջ եկան նոր սոցիալական, ինտեգրման խնդիրներ, որոնք պահանջում են համակարգային կարգավորումներ:

Փարաքար համայնքում 2025 թվականի դրությամբ բնակվող արցախից բռնի տեղահանվածների տվյալները ըստ բնակավայրերի.

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ	Բնակավայր	Անձերի թվաքանակ	Ընտանիքների թիվը
1.	Փարաքար	266	67
2.	Այգեկ	28	6
3.	Արևաշատ	56	13
4.	Բաղրամյան	105	26
5.	Թաիրով	65	17
6.	Մերձավան	202	52
7.	Մուսալեռ	58	14
8.	Նորակերտ	63	16
9.	Պտղունք	17	5
Ընդամենը		860	216

Փարաքար համայնքի աշխատակազմի սոցիալական ոլորտը համակարգող պատասխանատուների աշխատանքների շնորհիվ ակտիվ համագործակցություն է ձևավորվել տարբեր հասարակական կազմակերպությունների հետ՝ <<Կարմիր խաչ>>-ի հայկական գրասենյակի, ԱՄՆ միջազգային գործակալության (USAID), <<Օքսիջեն>> բարեգործական կազմակերպության, <<Մանկական զարգացման հիմնադրամի>>, <<Կայուն զարգացման հիմնադրամի>>, <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամի և այլոց հետ: Նմանաբովանդակ

համագործակցությունը նախատեսվում է իրականացնել նաև սույն ռազմավարության գործունեության ընթացքում համալրելով դոնորների ցանկը:

Փաստարկված ուսումնասիրությունների արդյունքում նախատեսվում է սույն ռազմավարության ընթացքում իրականացնել հետևյալ առաջնահերթություն ունեցող ծրագրերն ու միջամտությունները.

ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ

- Աջակցել պետական սոցիալական օժանդակության ծրագրերի իրականացմանը Փարաքար համայնքում:
- Նախատեսվում է իրավաբանական, հոգեբանական, սոցիալական, նյութական, խորհրդատվական տարբեր ծրագրեր՝ ռիսկային իրավիճակներում հայտնված և սոցիալապես խոցելի մարդկանց (տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, տեղահանվածների, անօթևանների, ազատազրկման վայրերից ազատ արձակված անձանց) և այլ սոցիալական խմբեր ներկայացնող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց:
- Նախատեսվում է աջակցություն ցուցաբերել և խրախուսել հասարակական կազմակերպություններին, կամավորներին համատեղ սոցիալական խնդիրների լուծման ծրագրերի արդյունավետ իրագործման համար:
- Կիրականացվեն տեղահանված քաղաքացիների հասարակական ինտեգրման և սոցիալական օժանդակության ծրագրեր:
- Համայնքի աշխատունակ, սակայն գործազուրկ բնակիչների համար աշխատատեղերի ապահովում՝ տարբեր ոլորտային ուղղվածության հնարավոր գործատուների հետ համագործակցությամբ:
- Սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավում, որտեղ կարևորվում են հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների միջև տեղեկատվության փոխանակման, համայնքում իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդնումը, ինչպես նաև պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման

միջոցառումների կանոնավոր իրականացումը և տվյալների շտեմարանի ստեղծումը.

- Սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստում, մասնավորապես կարևորվում է սոցիալական ծառայություններ մասնագետների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ փնտրելու հմտությունների զարգացումը, հաշմանդամություն ունեցող անձանց, ծերերին խնամելու, այդ թվում՝ տնային պայմաններում խնամք կազմակերպելու համար խնամատարների վերապատրաստումը,
- Համայնքում ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության իրականացման և այդ խմբերի սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական նպատակային ծրագրերի շրջանակներում համայնքային ծրագրերի մշակում, դրանց կատարման ապահովում,
- Կյանքի դժվարին իրավիճակում (ԿԴԻՀ) երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում վերջիններիս հետ տարվող աշխատանքների հետ կապված պատասխանատվություն կրող բոլոր կառույցների՝ ոստիկանության, դատախազության, կրթական, առողջապահական համակարգի, ցերեկային կենտրոնների, դատաիրավական համակարգի, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի, հասարակական կազմակերպությունների համակարգված փոխհամագործակցության իրականացում՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովման նպատակով,
- Համայնքում ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության նպատակով համայնքային ՀԿ-ների հետ շարունակական համագործակցության ապահովում և համատեղ ծրագրերի իրականացում,
- Համայնքում բնակվող Արցախից բռնի տեղահանված անձանց ինտեգրում, վերջիններիս աշխատանքով ապահովում:

X. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքային ենթակայության գույքի կառավարման առկա իրավիճակը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները հրամայական են դարձնում միասնական վերաբերմունքի արժանացումը առավել արդյունավետ կառավարման նպատակով: Այս իսկ պատճառով, ինչպես նաև շարունակական զարգացում ապահովելու նպատակով նախաձեռնվել է համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման ռազմավարության մշակումը, որը ներկայացվում է կից Հավելված -ի տեսքով:

XI. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Փարաքար համայնքի հնգամյա զարգացման ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական ոլորտը դիտարկվում է որպես համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնային և ռազմավարական ուղղություններից մեկը: Հողային և ջրային պաշարների նպատակային և արդյունավետ կառավարումը, գյուղատնտեսական արտադրության արդիականացումը, ինչպես նաև արտադրանքի մրցունակության բարձրացումը համարվում են այն հիմնարար գործոնները, որոնք հնարավորություն են ընձեռնում ապահովելու համայնքի պարենային անվտանգության բարձր մակարդակը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի բնակչության զգալի մասը զբաղված է գյուղատնտեսությամբ, անհրաժեշտ է իրականացնել համալիր և համակարգված միջոցառումներ, որոնք կներառեն գյուղատնտեսական ենթակառուցվածքների արդիականացում, ոռոգման համակարգերի վերականգնում և ընդլայնում, բարձրորակ տնկանյութի ապահովում և այլն: Զուգահեռաբար, առաջնային նշանակություն ունի բնական միջոցների պահպանմանն ու վերականգնմանը միտված քաղաքականության իրականացումը, մասնավորապես՝ հողերի բերրիության բարձրացումը, ջրային պաշարների կայուն և ռացիոնալ օգտագործումը, ինչպես նաև էկոհամակարգի հավասարակշռության

պահպանումը, ինչը համատեղ կերպով կնպաստի համայնքի երկարաժամկետ և կայուն զարգացումը:

ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ		Առկա
1.0	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, այդ թվում	362,53
1,1	վարելահող	215,77
1,2	բազմ տնկարկներ, ընդամենը	49,86
1.2.1	պտղատու այգի	36,54
1.2.2	խաղողի այգի	13,32
1,5	այլ հողատեսքեր	96,9
	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, այդ թվում	63,43
2,1	բնակելի կառուցապատման	48,24
2.1.1	տնամերձ	44,25
2,2	հասարակական կառուցապատման	3,6739
2,4	ընդհանուր օգտագործման	8,82
2,5	այլ հողեր	2,7
3.0	ԱՐԴՅՈՒՆԱԲ., ԸՆԴԵՐՔՕԳՏ., և ԱՅԼ ԱՐՏԱԴՐ. ՆՇԱՆԱԿ., այդ թվում	11,74
3,2	գյուղտնտեսական, արտադր.	6,81
3,3	պահեստարաններ	4,93
4.0	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ և ԿՈՄ. ԵՆԹԱԿԱՌ., այդ թվում	2,3
4,3	տրանսպորտ	2,18
4,4	կոմունալ	0,12
5.0	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, այդ թվում	3,17

5,4	պատմական և մշակութային	3,17
8.0	ՋՐԱՅԻՆ	0,3
8,4	ջրանցքներ	0,08
8,5	հիդրոտեխ. և ջրային տնտես.	0,22
ԸՆԴԱՄԵՆԸ		443,47
ԱՐԵՎԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ		Առկա
1.0	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, այդ թվում	211,24
1,1	վարելահող	141,11
1,2	բազմ տնկարկներ, ընդամենը	9,3
1.2.1	պտղատու այգի	5,8
1.2.2	խաղողի այգի	3,5
1,5	այլ հողատեսքեր	60,83
2	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, այդ թվում	140,46
2,1	բնակելի կառուցապատման	104,59
2.1.1	տնամերձ	104,28
2,2	հասարակական կառուցապ.	5,18
2,4	ընդհանուր օգտագործման	29,41
2,5	այլ հողեր	1,28
3.0	ԱՐԴՅՈՒՆԱԲ., ԸՆԴԵՐՔՕԳՏ., և ԱՅԼ ԱՐՏԱԴՐ. ՆՇԱՆԱԿ., այդ թվում	8,62
3,1	արդյունաբերության	0,68
3,2	գյուղտնտեսական, արտադր.	7,94
4.0	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ և ԿՈՄ. ԵՆԹԱԿԱՌ., այդ թվում	3,63
4,1	էներգետիկայի	0,04
4,3	տրանսպորտի	3,56
4,4	կոմունալ	0,03
5.0	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ,	2,44

	այդ թվում	
5,4	պատմական և մշակութային	2,44
6	Հատուկ նշանակության	12,07
8.0	ՋՐԱՅԻՆ	4,58
8,5	հիդրոտեխ. և ջրային տնտեսություն	4,58
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ		Առկա
1.0	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, այդ թվում	888,02
1,1	վարելահող	531,26
1,2	բազմ տնկարկներ, ընդամենը	57,21
1.2.1	պտղատու այգի	11,9
1.2.2	խաղողի այգի	45,31
1,5	այլ հողատեսքեր	299,55
	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, այդ թվում	137,22
2,1	բնակելի կառուցապատման	102,27
2.1.1	տնամերձ	102,11
2,2	հասարակական կառուցապ.	6,24
2,3	խառը	0,05
2,4	ընդհանուր օգտագործման	18,5
2,5	այլ հողեր	10,16
3.0	ԱՐԴՅՈՒՆԱԲ., ԸՆԴԵՐՔՕԳՏ., և ԱՅԼ ԱՐՏԱԴՐ. ՆՇԱՆԱԿ., այդ թվում	32,04
3,1	արդյունաբերության	1,3
3,2	գյուղտնտեսական, արտադր.	14,79
3,4	ընդերք	15,95
4.0	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ և ԿՈՄ. ԵՆԹԱԿԱՌ., այդ թվում	3,76
4,3	տրանսպորտի	3,76
5.0	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ,	11,25

	այդ թվում	
5,4	պատմական և մշակութային	11,25
8.0	ՋՐԱՅԻՆ	3,73
8,3	լճեր	1,21
8,4	ջրանցքներ	2,48
8,5	հիդրոտեխ. և ջրային տնտեսություն	0,04
ԸՆԴԱՄԵՆԸ		1076,02
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ		Առկա
1.0	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, այդ թվում	658,69
1,1	վարելահող	293,31
1,2	բազմ տնկարկներ, ընդամենը	133,12
1.2.1	պտղատու այգի	0,02
1.2.2	խաղողի այգի	133,1
1,5	այլ հողատեսքեր	232,26
	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, այդ թվում	138,93
2,1	բնակելի կառուցապատման	97,58
2.1.1	տնամերձ	91,02
2.1.2	այգեգործական	5,07
2,2	հասարակական կառուցապ.	6,81
2,3	խառը	3,19
2,4	ընդհանուր օգտագործման	19,51
2,5	այլ հողեր	11,84
3.0	ԱՐԴՅՈՒՆԱԲ., ԸՆԴԵՐՔՕԳՏ., և ԱՅԼ ԱՐՏԱԴՐ. ՆՇԱՆԱԿ., այդ թվում	60,86
3,1	արդյունաբերության	27,07
3,2	գյուղտնտեսական, արտադր.	4,99
3,4	ընդերք	28,8
4.0	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ	7,74

	և ԿՈՄ. ԵՆԹԱԿԱՌ., այդ թվում	
4,1	էներգետիկայի	4,52
4,2	կապի	0,22
4,3	տրանսպորտ	2,71
4,4	կոմունալ	0,29
5.0	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, այդ թվում	4,78
5,4	պատմական և մշակութային	4,78
6	Հատուկ նշանակության	68,67
8.0	ՋՐԱՅԻՆ	2,6
8,4	ջրանցքներ	2,55
8,5	հիդրոտեխ. և ջրային տնտեսություն	0,05
ԸՆԴԱՄԵՆԸ		942,27
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ		Առկա
1.0	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, այդ թվում	437,3
1,1	վարելահող	197
1,2	բազմ տնկարկներ, ընդամենը	145,16
1.2.1	պտղատու այգի	53,98
1.2.2	խաղողի այգի	91,18
1,4	արոտ	51,12
1,5	այլ հողատեսքեր	44,02
	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, այդ թվում	156,81
2,1	բնակելի կառուցապատման	109,47
2.1.1	տնամերձ	106,35
2,2	հասարակական կառուցապ.	5,93
2,4	ընդհանուր օգտագործման	27,85
2,5	այլ հողեր	13,56
3.0	ԱՐԴՅՈՒՆԱԲ., ԸՆԴԵՐՔՕԳՏ., և ԱՅԼ	21,33

	ԱՐՏԱԴՐ. ՆՇԱՆԱԿ., այդ թվում	
3,1	արդյունաբերության	6,09
3,2	գյուղտնտեսական, արտադր.	14,7
3,3	պահեստարաններ	0,54
4.0	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ և ԿՈՄ. ԵՆԹԱԿԱՌ., այդ թվում	14,09
4,1	էներգետիկայի	0,25
4,3	տրանսպորտ	13,64
4,4	կոմունալ	0,2
5.0	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, այդ թվում	2,12
5,4	պատմական և մշակութային	2,12
8.0	ՋՐԱՅԻՆ	1,73
8,4	ջրանցքներ	1,46
8,5	հիդրոտեխ. և ջրային տնտեսություն	0,27
ԸՆԴԱՄԵՆԸ		633,38
ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ		Առկա
1.0	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ	1131,6
1,1	վարելահող	608,75
1,2	բազմ տնկարկներ, ընդամենը	41,98
1.2.1	պտղատու այգի	29,51
1.2.2	խաղողի այգի	12,47
1,4	արոտ	305,15
1,5	այլ հողատեսքեր	175,72
	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, այդ թվում	170,04
2,1	բնակելի կառուցապատման	132,75
2.1.1	տնամերձ	91,42
2.1.2	այգեգործական	40,2

2,2	հասարակական կառուցապ.	8,07
2,3	խառը	0,19
2,4	ընդհանուր օգտագործման	16,57
2,5	այլ հողեր	12,46
3.0	ԱՐԴՅՈՒՆԱԲ., ԸՆԴԵՐՔՕԳՏ., և ԱՅԼ ԱՐՏԱԴՐ. ՆՇԱՆԱԿ., այդ թվում	43,39
3,1	արդյունաբերության	7,37
3,2	գյուղտնտեսական, արտադր.	17,93
3,3	պահեստարաններ	0,13
3,4	ընդերք	17,96
4.0	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ և ԿՈՄ. ԵՆԹԱԿԱՌ., այդ թվում	1,65
4,1	էներգետիկայի	0,02
4,2	կապի	0,06
4,3	տրանսպորտ	1,09
4,4	կոմունալ	0,48
5.0	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, այդ թվում	5,2
5,4	պատմական և մշակութային	5,2
8.0	ՋՐԱՅԻՆ	15
8,1	գետեր	3,38
8,4	ջրանցքներ	8,06
8,5	հիդրոտեխ. և ջրային տնտեսություն	3,56
ԸՆԴԱՄԵՆԸ		1366,88
ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ		Առկա
1.0	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, այդ թվում	278,81
1,1	վարելահող	205,7
1,2	բազմ տնկարկներ, ընդամենը	36,47

1.2.1	պտղատու այգի	34,04
1.2.2	խաղողի այգի	2,43
1,5	այլ հողատեսքեր	36,64
	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, այդ թվում	121,99
2,1	բնակելի կառուցապատման	96,31
2.1.1	տնամերձ	96,14
2,2	հասարակական կառուցապ.	1,44
2,4	ընդհանուր օգտագործման	18,95
2,5	այլ հողեր	5,29
3.0	ԱՐԴՅՈՒՆԱԲ., ԸՆԴԵՐՔՕԳՏ., և ԱՅԼ ԱՐՏԱԴՐ. ՆՇԱՆԱԿ., այդ թվում	8,82
3,2	գյուղտնտեսական, արտադր.	8,77
3,3	պահեստարաններ	0,05
4.0	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ և ԿՈՄ. ԵՆԹԱԿԱՌ., այդ թվում	6,51
4,1	էներգետիկայի	0,06
4,3	տրանսպորտ	6,45
5.0	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, այդ թվում	3,57
5,4	պատմական և մշակութային	3,57
8.0	ՋՐԱՅԻՆ	6,99
8,4	ջրանցքներ	6,99
ԸՆԴԱՄԵՆԸ		426,69
ՓԱՐԱՔԱՐ, ԹԱԻՐՈՎ ԳՅՈՒՂԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ		Առկա
1.0	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, այդ թվում	312,4
1,1	վարելահող	158,4
1,2	բազմ տնկարկներ, ընդամենը	91,74
1.2.1	պտղատու այգի	51,05

1.2.2	խաղողի այգի	40,69
1,5	այլ հողատեսքեր	62,26
	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, այդ թվում	316,65
2,1	բնակելի կառուցապատման	227,7
2.1.1	տնամերձ	226,92
2,2	հասարակական կառուցապ.	21,4
2,3	խառը	1,2
2,4	ընդհանուր օգտագործման	47,15
2,5	այլ հողեր	19,2
3.0	ԱՐԴՅՈՒՆԱԲ., ԸՆԴԵՐՔՕԳՏ., և ԱՅԼ ԱՐՏԱԴՐ. ՆՇԱՆԱԿ., այդ թվում	42,15
3,1	արդյունաբերության	12,18
3,2	գյուղտնտեսական, արտադր.	29,67
3,3	պահեստարաններ	0,3
4.0	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ և ԿՈՄ. ԵՆԹԱԿԱՌ., այդ թվում	16,01
4,1	էներգետիկայի	0,04
4,2	կապի	0,05
4,3	տրանսպորտ	15,8
4,4	կոմունալ	0,12
5.0	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, այդ թվում	6,61
5,4	պատմական և մշակութային	6,61
6	ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ	19,3
7	ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ	0,19
7,1	թփուտ	0,19
8.0	ՋՐԱՅԻՆ	5,21
8,3	լճեր	0,08
8,4	ջրանցքներ	5,04

8,5	հիդրոտեխ. և ջրային տնտեսություն	0,09
ԸՆԴԱՄԵՆԸ		718,52

Գյուղատնտեսական ներուժի առկա միջոցների գնահատման շրջանակներում Փարաքար համայնքում արձանագրվել են հետևյալ տվյալները.

- Այգեկ բնակավայրում առկա է 4 ջերմատուն: Կենդանաբուծության ոլորտում հաշվառված է 55 կով , 35 հորթ, 2 երինջ, 1582 ոչխար, 102 խոզ, 53 ճագար, ինչպես նաև թռչնաբուծության ուղղությամբ՝ 372 հավ, 50 հնդկահավ: Բացի այդ, զարգացած է մեղվաբուծությունը՝ 75 մեղվաընտանիք: Վերամշակվող ձեռնարկություններ այս բնակավայրում չեն գործում:
- Բաղրամյան բնակավայրում գործում է 20 ջերմատուն: Կենդանաբուծության ոլորտում առկա է շուրջ 224 խոշոր եղջերավոր կենդանի և 96 ոչխար: Վերամշակվող ձեռնարկություններ այս բնակավայրում չեն գործում:
- Պտղունք բնակավայրում առկա է 5 ջերմատուն, գործում է մեկ վերամշակվող արտադրություն: Կենդանաբուծության ոլորտում հաշվառված է շուրջ 43 կով, 102 երինջ, 700 ոչխար, 35 խոզ, իսկ թռչնաբուծության ոլորտում՝ 786 գլուխ թռչուն: Վերամշակվող ձեռնարկություններ այս բնակավայրում չեն գործում:
- Թաիրով բնակավայրում առկա է 13 ջերմատուն: Կենդանաբուծության ոլորտում պահվում է մոտավորապես 73 խոշոր եղջերավոր կենդանի, 43 խոզ, 150 հավ, իսկ մեղվաբուծության ոլորտում՝ 16 մեղվաընտանիք: Վերամշակվող ձեռնարկություններ այս բնակավայրում չեն գործում:
- Մուսալեռ բնակավայրում առկա է 12 ջերմատուն: Կենդանաբուծության ոլորտում պահվում է մոտավորապես 20 խոշոր եղջերավոր կենդանի, 3 ճագար, թռչնաբուծության ուղղությամբ՝ 150 հավ, իսկ մեղվաբուծության ոլորտում՝ 30 մեղվաընտանիք: Վերամշակվող ձեռնարկություններ այս բնակավայրում չեն գործում:
- Արևաշատ բնակավայրում կենդանաբուծության ոլորտում պահվում է մոտավորապես 463 խոշոր եղջերավոր կենդանի, 70 խոզ, 659 հավ, իսկ

մեղվաբուծության ոլորտում՝ 12 մեղվաընտանիք, ինչպես նաև 38 ճագար : Վերամշակվող ձեռնարկություններ այս բնակավայրում չեն գործում:

- Մերձավան բնակավայրում պահվում է շուրջ 308 խոշոր եղջերավոր կենդանի, 10 խոզ, 12 ճագար, 384 հավ, առկա է 2 ջերմատուն, ինչպես նաև գործում է մեկ վերամշակվող ձեռնարկություն:
- Նորակերտ բնակավայրում առկա է 30 ջերմատուն:Պահվում է շուրջ 376 խոշոր եղջերավոր կենդանի, 34 խոզ, 501 ճագար, 945 հավ, 1008 ոչխար, ինչպես նաև 38 մեղվաընտանիք: Վերամշակվող ձեռնարկություններ այս բնակավայրում չեն գործում:
- Փարաքար բնակավայրում առկա է 10 ջերմատուն: Պահվում է շուրջ 116 խոշոր եղջերավոր կենդանի, 9 խոզ, 606 հավ, 600 ոչխար, ինչպես նաև 115 մեղվաընտանիք: Վերամշակվող ձեռնարկություններ այս բնակավայրում չեն գործում:

2025 թվականին Փարաքար համայնքում հաշվառված գյուղատնտեսական կենդանիների մասին տեղեկատվությունը ներկայացվում է ստորև ներկայացված աղյուսակի միջոցով.

ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բնակավայրերը/գյուղերը	Խոշոր եղջերավոր	որից՝ կովեր	արտադրող ցուլեր	Խոզեր, ընդամենը	որից՝ մայր խոզեր հիմնական հոսքի	Ոչխարներ բոլոր ցեղերի, ընդամենը	որից՝ մաքիներ	Շիշակներ	Այծեր, ընդամենը	որից՝ մայր այծեր	Ձիեր, ընդամենը	Ճագարներ, ընդամենը	որից՝ մայր ճագարներ	Թռչուններ, ընդամենը	որից՝ աճան հավեր	Մեղվաընտանիքներ(հատ)
Արևաշատ	463	164	0	70	21	0	0	0	0	0	0	38	15	1533	659	12
Այգեկ	86	42	0	105	15	1582	1380	0	0	0	4	78	28	615	563	65
Բաղրամյան	224	93	2	96	30	160	110	50	0	0	0	0	0	1588	1405	83
Թաիրով	74	18	1	43	8	0	0	0	3	2	3	32	7	105	85	16
Մերձավան	313	7	1	10	1	0	0	0	0	0	0	12	3	384	338	0

Մուսալեռ	15	6	2	0	0	0	0	0	0	0	0	8	2	145	96	30
Նորակերտ	376	171	8	34	11	1008	888	120	0	0	10	501	85	1440	945	38
Պտղունք	147	44	0	35	21	700	550	150	0	0	0	15	4	969	839	20
Փարաքար	116	53	8	9	7	600	550	50	0	0	0	0	0	606	499	115
ԸՆԴԱՄԵՆԸ	1814	598	22	402	114	4050	3478	370	3	2	17	684	144	7385	5429	379

Համայնքում առկա գյուղատնտեսական տեխնիկայի, տրակտորների քանակը, նրանց ֆունկցիոնալ կարգավիճակը բավարարում է գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերների պահանջները և գրեթե որևէ խնդիր այս առումով չի արձանագրվում:

Համայնքում գործում են երկու համայնքային անասնաբույժներ՝ որոնք սպասարկում են անասնապահության բնագավառը: Բույսերի պաշտպաններ, ագրոնոմներ, ոռոգման համակարգերը սպասարկող և գյուղատնտեսական այլ մասնագետների առկայությունը ընդհանուր առմամբ բավարար է, իսկ ժամանակավոր դեֆիցիտը լուծվում է մայրաքաղաքի մասնագիտական միջոցի հաշվին:

Գյուղատնտեսության ոլորտում նախատեսվող համալիր ծրագրերի և ներդրումային նախաձեռնությունների իրականացումը հնարավորություն կտա ձևավորել մրցունակ և ժամանակակից գյուղատնտեսական միջավայր, որը կբերի արտադրողականության և բերքատվության բարձրացման, գյուղացիական տնտեսությունների ֆինանսական կայունության ամրապնդման, ինչպես նաև համայնքի բնակչության զբաղվածության և եկամուտների մակարդակի աճի:

Հիմնական խնդիրը՝ դա ոռոգելի տարածքների մեծացումն է, ինչպես նաև ոռոգման գրաֆիկների բարեփոխումը: Չնայած, որ առկա են ոռոգման արդյունավետ համակարգեր, սակայն ոլորտը արդիականացնելու խնդիրը առկա է:

ՆՊԱՏԱԿԸ

Սույն ռազմավարության համատեքստում արդյունավետ համակարգերի ներդրման և ոռոգելի տարածքների ծավալների ընդլայնման միջոցով բարձրացնել

գյուղատնտեսական ապրանքների բազմազանությունն ու մեկ միավորի հաշվով ծախսարդյունավետությունը:

Վերը նշված տեղեկատվության հիման վրա գյուղատնտեսական ոլորտում դիտարկվում են հետևյալ խնդիրները և դրանց հնարավոր լուծումները.

ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խնդիր 1. Ոռոգման ջրի անբավարարություն, հին և վնասված ոռոգման համակարգեր:

Խնդիր 2. Արտադրանքի իրացման դժվարություններ, գների անկայունություն:

Խնդիր 3.Պահեստավորման, վերամշակման և տեղափոխման ենթակառուցվածքների բացակայություն:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Վերանորոգել կամ փոխարինել վնասված ոռոգման խողովակաշարերը:
- Աջակցել ոռոգման ժամանակակից համակարգերի ձևավորմանը:
- Պարբերաբար կազմակերպել բանակցություններ ջրամատակարար կազմակերպությունների հետ՝ հասանելիության և բաշխման պայմանների հստակեցման համար:
- Տարածել տեղեկատվություն պետական ֆինանսական աջակցության ծրագրերի վերաբերյալ:
- Աջակցել գյուղատնտեսական ֆորմալ և ոչ ֆորմալ գյուղատնտեսական կառույցների ստեղծմանը համատեղ արտադրության և վաճառքի գործընթացը դյուրինացնելու նպատակով:
- Մասնակցել տեղական և հանրապետական գյուղատնտեսական ցուցահանդեսներին:
- Կազմակերպել պարբերական թեմատիկ սեմինարներ համայնքում՝ մասնագետների ներգրավմամբ:

- Տարածել տեղեկատվական նյութեր և ձեռնարկներ՝ ժամանակակից գյուղատնտեսության վերաբերյալ:

Առաջարկվող լուծումների իրականացումը նախատեսվում է բազմափուլ գործընթացով, որը ընդգրկելու է կազմակերպչական, տեխնիկական և ֆինանսական միջոցառումների համալիր կիրառություն: Նախատեսվում է ապահովել գյուղատնտեսական ենթակառուցվածքների արդիականացումը, այդ թվում՝ ոռոգման համակարգերի կատարելագործում, ժամանակակից տեխնիկայի ներմուծում և արտադրական գործընթացների մոդեռնիզացում: Իրականացման ընթացքում մեծ նշանակություն է տրվում համայնքային ներգրավվածությանը և շահագրգիռ կողմերի արդյունավետ համագործակցությանը, ինչը կնպաստի ծրագրի նպատակների լիարժեք և կայուն իրականացմանը:

Առաջարկվող լուծումների իրականացումը նախատեսվում է բազմափուլ գործընթացով, որը ընդգրկելու է կազմակերպչական, տեխնիկական և ֆինանսական միջոցառումների համալիր կիրառություն: Նախատեսվում է ապահովել գյուղատնտեսական ենթակառուցվածքների արդիականացումը, այդ թվում՝ ոռոգման համակարգերի կատարելագործում, ժամանակակից տեխնիկայի ներմուծում և արտադրական գործընթացների մոդեռնիզացում: Իրականացման ընթացքում մեծ նշանակություն է տրվում համայնքային ներգրավվածությանը և շահագրգիռ կողմերի արդյունավետ համագործակցությանը, ինչը կնպաստի ծրագրի նպատակների լիարժեք և կայուն իրականացմանը:

XII. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Փարաքար համայնքի զարգացման ռազմավարության շրջանակում շրջակա միջավայրի պահպանումը դիտարկվում է որպես առանցքային ուղղություն, որն ունի երկարաժամկետ նշանակություն համայնքի սոցիալ-տնտեսական կայունության և բնակչության կենսական պայմանների բարելավման համար: Համայնքը նպատակ ունի ստեղծել անվտանգ, կանաչ և կենսունակ միջավայր, որտեղ տնտեսական աճը կզուգակցվի բնապահպանական հավասարակշռության ,

միջոցների խելամիտ օգտագործման և բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի հետ:

Համայնքում շրջակա միջավայրի պահպանության հիմնական մարտահրավերները ներառում են կանաչ տարածքների պակասը, ջրային և հողային ռեսուրսների պահպանման անհրաժեշտությունը, ինչպես նաև բնապահպանական գիտակցության ցածր մակարդակը: Այս խնդիրներին լուծում տալու նպատակով մշակվել է գործողությունների շրջանակ, որը միաժամանակ ուղղված է ինչպես ենթակառուցվածքների արդիականցմանը, այնպես էլ կառավարման մոդելների և մշակութային մոտեցումների բարեփոխմանը:

Փարաքար համայնքում աղբահանության համակարգը գործում է կանոնակարգված ձևով, սակայն այն դեռևս հեռու է ներկայիս բնապահպանական պահանջներին լիարժեք համապատասխանելուց: Ծառայության տարածական ընդգրկվածությունը, տեխնիկական միջոցների սահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև թափոնների մշակման ենթակառուցվածքների բացակայությունը մեծապես սահմանափակում են համայնքի կարողությունները շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների մեղմման հարցում: Հնգամյա զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսվում է աղբահանության համակարգի որակական բարելավում՝ հիմված շրջակա միջավայրի պահպանման և շրջանառու տնտեսության սկզբունքների վրա: Առաջնահերթություն է տրվելու համայնքի ամբողջական քարտեզագրմանը՝ աղբահանության ռիսկերով գոտիների նույնականացմամբ, ինչպես նաև նոր աղբամանների տեղադրմանը և տեխնիկական միջոցների վերազինմանը: Քայլեր կձեռնարկվեն թափոնների վերամշակման և վերահաշվարկման ուղղությամբ արդյունավետ համակարգեր ստեղծելու նպատակով: Բացի այդ, կդիտարկվի օրգանական թափոնների առանձին հավաքման և կենսապարարտանյութերի արտադրության հնարավորությունը, ինչը կարող է նվազեցնել ընդհանուր աղբի ծավալը և նպաստել տեղական տնտեսության զարգացմանը: Թափոնների կառավարման այս նոր մոդելը միտված է ոչ միայն տեսանելի մաքրության բարձրացմանը, այլև համայնքում բնապահպանական մշակույթի ձևավորմանը՝ որպես կայուն և

պատասխանատու կառավարման մաս: Չնայած համայնքում ներկայումս հանքարդյունաբերական գործունեություն չի իրականացվում, տարածքի աշխարհագրական դիրքն ու տնտեսապես ակտիվ հատվածների կարողությունը ենթադրում են որոշակի ռիսկեր բնական ռեսուրսների ապագայում շահագործման տեսանկյունից: Համայնքը որդեգրում է կանխարգելիչ և պատասխանատու մոտեցում՝ նպատակ ունենալով վերահսկել ցանկացած ապագա միջամտություն շրջակա միջավայրին: Առաջիկա տարիներին համայնքը կձգտի ապահովել մասնակցային վերահսկողություն բնապահպանական գործընթացներում՝ ներառյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, տարածքների օգտագործման և ռեսուրսների շահագործման քննարկումները: Նախատեսվում է ստեղծել մոնիթորինգային մեխանիզմներ, որոնք թույլ կտան համայնքին գնահատել և վերահսկել հնարավոր բնապահպանական ազդեցությունները՝ ձևավորելով համագործակցային մեխանիզմները ինչպես պետական մարմինների, այնպես էլ մասնավոր ներդրողների հետ: Այս կերպ համայնքը կկարողանա պաշտպանել իր բնական ռեսուրսները և կանխել էկոլոգիական հավասարակշռության խաթարումը:

Կանաչ տարածքների պահպանումը և ընդլայնումը ևս համայնքի ռազմավարական առաջնահերթություններից է: Ներկայումս կանաչ գոտիների ծավալը չի բավարարում բնակչության հանգստի, վերականգնման և էկոլոգիական բալանսի պահպանման պահանջները: Հնգամյա զարգացման ծրագրի շրջանակում համայնքը կկենտրոնանա նոր այգիների և ծառապատ հատվածների հիմնման վրա, ինչպես նաև գործող կանաչ տարածքների վերականգնման ու պահպանման միջոցառումների վրա: Կխթանվի ջրային ռեսուրսների խնայողաբար օգտագործումը՝ խելացի ոռոգման համակարգերի ներդրմամբ, և կիրականացվի բուսածածկի տեղայնացված բարելավում՝ հողի էրոզիայի նվազեցման և միկրոկլիմայի կայունացման նպատակով: Միաժամանակ, համայնքը դիտարկում է էկոհամակարգերի վերականգնումը որպես երկարաժամկետ ներդրում՝ բարելավելով բնակելի միջավայրը և խթանելով բնապահպանական կայունությունը:

Հասարակության ակտիվ մասնակցությունն ու էկոլոգիական գիտակցության ձևավորումը հիմնարար բնապահպանական քաղաքականության արդյունավետության համար: Այդ նպատակով նախատեսվում է մշակել և ներդնել շարունակական կրթական ծրագրեր, կազմակերպել հանրային իրազեկման արշավներ և աջակցել համայնքային կամավորական բնապահպանական նախաձեռնություններին:

Փարաքար համայնքը շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այս ռազմավարությամբ ձգտում է ձևավորել զարգացող, խելամիտ կառավարվող և բնության հետ ներդաշնակություն ապահովող համայնք, որտեղ յուրաքանչյուր նախաձեռնություն համատեղում է բնապահպանական մտածողությունն ու զարգացման տեսլականը:

XIII. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Փարաքար համայնքի կայուն և հավասարակշռված զարգացումը հնարավոր է միայն ժամանակակից քաղաքաշինական մոտեցումների և տարածական պլանավորման միջոցով:

Քաղաքաշինությունը հանդիսանում է համայնքի ֆունկցիոնալ կազմակերպման առանցքային ուղղություններից մեկը՝ ապահովելով բնակիչների համար հարմարավետ, անվտանգ և կանաչ համայնքի ձևավորում: Սույն ծրագրով նախատեսվում է իրականացնել ռազմավարական նշանակության կառուցապատման, բակային և հասարակական տարածքների բարեկարգման, ինժեներական ենթակառուցվածքների արդիականացման և նոր բնակելի հատվածների համաչափ ընդլայնման մի շարք միջոցառումներ:

Քաղաքաշինության ոլորտի խնդիրները ցանկացած տարածաշրջանում կարող են տարբեր լինել, սակայն ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքում կարելի է առանձնացնել մի շարք հատուկ մարտահրավերներ ու խնդիրներ, որոնք կապված են տնտեսական, սոցիալական, բնապահպանական և կառավարման ոլորտների հետ: Այդ խնդիրներին համապատասխան լուծումները կարող են

տարբեր լինել, սակայն հիմնականում պետք է կենտրոնանալ բազմաբնույթ համակցված մոտեցումների վրա: Կարող ենք առանձնացնել որոշ կարևորագույն հիմնախնդիրներ ու առաջարկել հնարավոր լուծումներ:

Փարաքար համայնքի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրներից մեկը կանգառների ներկա վիճակն է: Համայնքում կանգառների զգալի մասը կամ ամբողջությամբ բացակայում է, կամ գտնվում է մաշված և ոչ բարվոք վիճակում: Վերջին տարիներին նկատվում է համայնքային սեփականություն հանդիսացող կանգառների ֆիզիկական վիճակի շարունակական վատթարացում: Մի շարք կանգառներում բացակայում են ծածկույթներ, նստատեղեր, լուսավորություն և սպասասրահներ: Սա հանգեցնում է այն բանին, որ քաղաքացիները ստիպված են լինում սպասել հանրային տրանսպորտին առանց պաշտպանվածության՝ եղանակային պայմաններից, ինչն իր հերթին նվազեցնում է հասարակական տրանսպորտի մատչելիության և հարմարավետության մակարդակը: Պլանավորվում է ձեռնարկել կանգառների համակարգված վերանորոգում և ենթակառուցվածքների համալրում՝ ապահովելու քաղաքացիների անվտանգ, հարմարավետ սպասարկման միջավայրը:

Փարաքար համայնքի վարչական տարածքում գտնվող բազմաբնակարան շենքերի ներկայիս վիճակի ուսումնասիրությունը հանգում է նրան, որ անհրաժեշտություն է կառավարման նոր մարտավարության մշակումը, ապահովելով ինստիտուցիոնալ կայուն զարգացում:

Հաջորդ հիմնախնդիրը ճանապարհների ոչ պատշաճ վիճակն է: Համայնքի տարածքում գտնվող միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհները հիմնականում գրունտային են, խճապատված և գտնվում են ոչ բարվոք վիճակում: Համայնքի միջպետական նշանակության ճանապարհները կահավորված են ճանապարհային երթևեկության նշաններով, սակայն մյուս փողոցներում դրանք հիմնականում բացակայում են: Հաշվի առնելով վերը նշվածը՝ նախաձեռնվում է իրականացնել ճանապարհների փուլային բարեկարգում՝ առաջնահերթություն տալով բնակչության կողմից առավել օգտագործվող ուղիներին, ինչպես նաև ներհամայնքային փողոցներում ապահովել երթևեկության նշանների տեղադրում:

Հիմնախնդիրներից մեկն է համայնքային նշանակության մարզական, կրթական, մշակութային տների և հաստատությունների սակավությունը և ոչ բարվոք վիճակը: Մշակութային տների վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ դրանք արտաքինից գտնվում են բավարար կամ նորմալ վիճակում, սակայն ներքին հատվածում շատերը կարիք ունեն վերանորոգման, իսկ որոշները՝ նաև ջեռուցման համակարգի ապահովման կամ վերականգնման: Նախատեսվում է նախաձեռնել մշակութային տների տեխնիկական վիճակի համապարփակ ուսումնասիրություն, մասնագիտական գնահատում և համապատասխան վերանորոգման ու վերակառուցման աշխատանքների ծրագրավորում: Առանձնահատուկ ուշադրություն դարձնել ներքին ենթակառուցվածքների վերականգնմանը և ջեռուցման համակարգերի ապահովմանը՝ ապահովելով մշակութային կյանքի շարունակականությունը:

Փարաքար համայնքի վարչական շենքերի մասին կարող ենք ասել, որ 3 վարչական շենքեր գտնվում են վթարային կամ վատ վիճակում, որոնք պահանջում են վերանորոգում կամ վերականգնում: Պլանավորված է կազմակերպել վթարային և վատ վիճակում գտնվող վարչական շենքերի տեխնիկական գնահատում և դրանք վերանորոգելու կամ վերականգնելու համապարփակ աշխատանքների իրականացում՝ ապահովելու կառույցների անվտանգությունն ու լիարժեք շահագործումը:

Համայնքում գործում են բուժամբուլատորիաներ, որոնք հիմնականում տեղակայված են համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում, որոնց առկա վիճակը համեմատած մյուս համայնքային գույքերի ամենաանմխիթարն է: Շենքերի մեծ մասը գտնվում է վատ, վթարային և ոչ բարվոք վիճակում, իսկ որոշները ունեն նոր մասնաշենքի կառուցման անհրաժեշտություն: Առաջարկվող լուծումը բուժամբուլատորիաների շենքերի տեխնիկական գնահատումն ու վերականգնումն է:

Համայնքային նշանակության այգիները ներկայումս կարիք ունեն լրացուցիչ բարեկարգման, ինչպես նաև կան բնակավայրեր, որտեղ դրանք բացակայում են:

Լուծում. Այն բնակավայրերում, որտեղ դրանք առկա չեն, նախատեսվում է կառուցել նոր այգիներ՝ համայնքի բնակիչների հանգստի, ժամանցի և բնության հետ շփման հնարավորությունները ընդլայնելու նպատակով:

ՆՊԱՏԱԿԸ

Մեր առաջնային նպատակն է Փարաքարը դարձնել քաղաքաշինական նորագույն պահանջներին համապատասխանող համայնք:

Այս ուղղությամբ նախատեսվող ծրագրերի իրականացումը կնպաստի համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը, ինչպես նաև կխթանի ներդրումային հնարավորությունները՝ ձևավորելով կարգավորված, մաքուր և գրավիչ համայնքային միջավայր՝ հարմարավետ ապրելու, աշխատելու և հանգստանալու համար:

XIV. ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Հողաշինությունը համայնքի տարածքային զարգացման առանցքային ուղղություններից է, որը ձևավորում է հիմք՝ կառուցապատման, ենթակառուցվածքների զարգացման և ներդրումային հոսքերի ապահովման համար: Հողի նպատակային և իրավականորեն կարգավորված օգտագործումը կարևոր նախադրյալ է ինչպես համայնքի համաչափ աճի, այնպես էլ բնակիչների կենսամակարդակի բարձրացման տեսանկյունից:

Փարաքար համայնքի հողային քաղաքականության առաջնահերթությունն է հողի արդյունավետ օգտագործման, տարածական պլանավորման և իրավական հստակության ապահովումը: Սա նպաստում է ոչ միայն տարածքի ճշգրիտ կառավարմանը, այլև ներդրումային միջավայրի կայունացմանը: Հողային ռեսուրսների պատասխանատու և ռազմավարական մոտեցմամբ կառավարումը հիմք է հանդիսանում հզոր, հավասարակշռված և երկարաժամկետ տարածքային զարգացման համար:

XV. ՏՐԱՆՍՊՈՐՏ

Փարաքար համայնքը զբաղեցնում է ռազմավարական դիրք՝ տեղակայված լինելով մայրաքաղաք Երևանի և Էջմիածին քաղաքի միջև, ինչպես նաև անմիջական հարևանությամբ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանին: Այս աշխարհագրական առավելությունը համայնքին ընձեռնում է լայն հնարավորություններ՝ տրանսպորտային կապերի և միջմարզային ինտեգրման տեսանկյունից:

Տրանսպորտային ոլորտում ձևավորված համակարգը մասամբ է ապահովում բնակչության հարմարավետ և արդյունավետ տեղաշարժը՝ ինչպես համայնքի ներսում, այնպես էլ՝ հարակից քաղաքների և կենտրոնների ուղղությամբ: Մասնավորապես՝ Փարաքար համայնքի բոլոր բնակավայրերը ուղղակիորեն կամ միջնորդավորված օգտվում են Էջմիածին, Արմավիր, Բաղրամյան, Երևան, Արաքս համայնքները սպասարկող երթուղիներից:

Համայնքը նաև ապահովված է տեխնիկական նշանակության տրանսպորտային միջոցներով, այդ թվում՝ բարձրացնող սարքավորումների համար նախատեսված ավտոկռունկներով և գյուղատնտեսական տեխնիկայով, քարշակներով և հանրային կյանքը սպասարկող այլ մեքենա սարքավորումներից, որոնք անհրաժեշտության դեպքում հասանելի են բնակիչներին՝ տարբեր բնույթի աշխատանքների իրականացման, տեղափոխման և գյուղատնտեսական նպատակների համար:

ՆՊԱՏԱԿԸ

Հաշվի առնելով առկա ներուժը, համայնքն ակնկալում է առաջիկա հինգ տարիների ընթացքում զարգացնել սույն ուղղությունը՝ ձգտելով ձևավորել առավել ինտեգրված, ժամանակակից և մոբիլ տրանսպորտային միջավայր, որն ամբողջապես կհամապատասխանի ժամանակի պահանջներին և համայնքի զարգացման ընդհանուր տեսլականին: Նախատեսվում է ամրապնդել արդեն գործող համակարգը՝ նոր լուծումներով և առավել արդյունավետ կառավարման մոդելներով:

Տրանսպորտային ենթակառուցվածքների շարունակական կատարելագործումը և մատչելիության բարձրացումը հանդիսանում են համայնքի ընդհանուր զարգացման ռազմավարական առանցքներից մեկը:

Փարաքարը, որպես միջմարզային կապի կարևոր հանգույց, ունի բոլոր անհրաժեշտ նախադրյալները՝ կայուն և հավասարակշռված աճ ապահովելու համար: Առաջիկայում տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման նպատակով նախատեսվում է առավել հրատապ լուծում ունեցող խնդիրների, այն է՝ ճանապարհային նշանների, կանգառների, ջրահեռացման համակարգերի արդիականացման աշխատանքների իրականացումը:

Սույն ռազմավարությամբ սահմանված ժամկետներում նախատեսվում է ամբողջապես վերափոխել ճանապարհային նշանները, համայնքի բոլոր բնակավայրերում ունենալ ժամանակակից կանգառներ:

2026 թվականից նախատեսվում է համայնքում ունենալ անվճար տրանսպորտային համակարգ, որը օպերատիվ կապ կստեղծի համայնքի բոլոր գյուղերի միջև:

XVI. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Առևտրի և սպասարկման ոլորտը կազմում է Փարաքար համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը: Համայնքի տեղաբաշխումը՝ մայրաքաղաք Երևանի, քաղաք Էջմիածնի և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի անմիջական հարևանությամբ, ստեղծում է նպաստավոր նախադրյալներ տնտեսական ակտիվության աշխուժացման, գործարար միջավայրի ձևավորման և ներդրումային հետաքրքրությունների խթանման համար:

Համայնքի տարածքում աստիճանաբար ձևավորվել և զարգանում է մանրածախ և ծառայությունների ոլորտի ենթակառուցվածք՝ ներառելով բազմաբնույթ առևտրային միավորներ, սպասարկման կենտրոններ, հասարակական սննդի կետեր, ինչպես նաև կենցաղային, տեխնիկական,

արհեստագործական և անձնական սպասարկում իրականացնող տնտեսվարողներ: Սույն համակարգը սպասարկում է ոչ միայն համայնքի բնակիչներին, այլև հարակից բնակավայրերի և մայրուղիներով անցնող քաղաքացիների պահանջարկը:

Առևտրի և սպասարկման ոլորտի կայուն զարգացումը նպաստում է զբաղվածության բարձրացմանը, տնտեսվարողների ակտիվացմանը և տեղական բյուջետային եկամուտների ավելացմանը: Համայնքն ակնկալում է առաջիկա հինգ տարիների ընթացքում խթանել ոլորտում գործունեություն ծավալող ձեռնարկությունների կարողությունների ընդլայնումը, ծառայությունների բազմազանեցումը և նորարարական մոտեցումների ներմուծումը՝ հիմնվելով հավասարակշռված տնտեսական զարգացման և տարածքային համաչափության սկզբունքների վրա:

Համայնքն իր ռազմավարական տեսլականի շրջանակներում շարունակելու է խրախուսել տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների ակտիվ մասնակցությունը, խթանել նոր ծառայությունների և մանր ձեռնարկատիրության զարգացումը՝ միաժամանակ ապահովելով համապատասխան պայմաններ բիզնեսի կայունության և բնակչության որակյալ սպասարկման համար: Սույն ոլորտում ակնկալվում է կայուն զարգացում՝ ուղղված համայնքի տնտեսական դինամիկայի բարձրացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և տեղական տնտեսական շրջանառության ամրապնդմանը: Այս ամենը կծառայի համայնքի տնտեսական ինքնաբավության, սոցիալական կայունության և բնակչության կենսամակարդակի շարունակական բարելավման կարևոր նպատակներին:

Չնայած սույն ոլորտում գրանցած դրական տեղաշարժերի, համայնքում դեռ առկա են համակարգային խնդիրներ, որոնք խոչընդոտում են ծառայությունների մատուցման ոլորտում ներգրաված կազմակերպությունների համաչափ զարգացումը բոլոր բնակավայրերում՝ գյուղերում: Այս իրավիճակը հանգեցնում է ծառայությունների անհավասար մատչելիության, բնակիչների սոցիալական նվազման, ինչպես նաև համայնքի ներքին շուկայի պոտենցիալ թերշահարկման:

Այս խնդիրների լուծման և ոլորտի խթանման համար համայնքը որդեգրում է մասնակցային զարգացման նոր մոտեցում, որը հիմված է համագործակցության, վստահության և խրախուսման վրա: Առաջիկա տարիներին նախատեսվում է կազմակերպել հանրային լայն միջոցառումներ ուղղված գործարար միջավայր–համայնք կապի ամրապնդման նպատակով: Որի ընթացքում համայնքը հանդես կգա որպես նախաձեռնող և կապող օղակ՝ տնտեսվարողների, գործարար շրջանակների և հնարավոր բարերարների միջև: Կսահմանվեն «Պատասխանատու հարկատու», «Լավագույն բարերար», «Լավագույն գործընկեր» մրցանակները:

Սույն միջոցառումը ոչ միայն կհանգեցնի համագործակցային նոր մշակույթի ձևավորմանը, այլ նաև կմոտիվացնի նոր ներդրումներ, կուժեղացնի համայնք-մասնավոր հատված կապը և կխթանի համայնքի տնտեսական ներուժի լիարժեք օգտագործումը՝ հավասարաչափ ընդգրկելով բոլոր բնակավայրերը:

ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՀ	Ռեստորաններ	Հանրային սնունդ	Խանութներ	Շինանյութ	Վառելիքի սպասարկ-ման կետ	Կահույք	Ծաղկի սրահ
1	16	35	100	9	21	30	7

Գծապատկեր 3. Փարաքար համայնքի առևտուր և սպասարկման ոլորտի քանակական տվյալների գծապատկերը.



XVII. ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կոմունալ տնտեսության ոլորտը համայնքի կենսունակ զարգացման կարևորագույն ուղղություններից մեկն է: Այն անմիջական ազդեցություն ունի բնակիչների առօրյա պայմանների բարելավման, առողջ ու բարեկարգ միջավայրի ձևավորման և համայնքային կայունության ապահովման վրա:

ՆՊԱՏԱԿԸ

Փարաքար համայնքում կոմունալ համակարգերի շարունակական զարգացումն ու արդիականացումը դիտարկվում են որպես ռազմավարական նպատակ, որի իրականացումը կնպաստի ինչպես սոցիալական հարմարավետության բարձրացմանը, այնպես էլ համայնքային կյանքի ամենօրյա կազմակերպման մակարդակի ամրապնդմանը:

Առաջիկա տարիներին նախատեսվում է խորքային բարեփոխումների իրականացում՝ ուղղված կոմունալ ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացմանը, մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության համաչափ ապահովմանը: Համայնքը նպատակ ունի ապահովել բնակչության ներառվածությունն ու շահառու լինելու հավասար հնարավորությունները՝

բնակիչների սոցիալական կարգավիճակից, բնակավայրի դիրքից և չափից անկախ: Բարեփոխումների շրջանակներում մեծապես կարևորվելու է նաև նորարարական լուծումների, տեխնոլոգիական ժամանակակից մոտեցումների և էկոլոգիապես պատասխանատու գործելակերպի ներմուծումը: Ընդունվելու են որոշումներ, որոնք կբխեն համայնքի իրական կարիքներից: Համայնքը պատրաստակամ է խթանել նաև պետական-մասնավոր համագործակցությունը, միջազգային և տեղական ծրագրերի հետ գործընկերությունն այս ոլորտի արդիականացման նպատակով:

Փարաքար համայնքը ձգտում է դառնալ կոմունալ տնտեսության կայուն կառավարման և նորարարական մոտեցումների կիրառման օրինակելի համայնք: Բարեփոխումների հաջող իրականացումը կվերածի Փարաքարը մաքուր, կանաչ, հարմարավետ և համաչափ զարգացող համայնք՝ որտեղ կոմունալ սպասարկումը դադարում է լինել սոսկ ծառայություն և դառնում է կենսակերպի անբաժան մաս:

XVIII. ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐ

Փարաքար համայնքի բոլոր բնակավայրերը ապահովված են խմելու ջրով, սակայն համակարգերը լիարժեք չեն համապատասխանում ժամանակակից սպասարկման և արդյունավետ կառավարման պահանջներին և մի շարք բնակավայրերում գտնվում են թերի վիճակում: Համակարգերի ընդհանուր վիճակը կարիք ունեն տեխնիկական արդիականացման: Համայնքի ռազմավարական առաջնահերթություններից է հանդիսանում խմելու ջրի համակարգի համապարփակ արդիականացումը՝ նոր տեխնոլոգիական մոտեցումներով և արդյունավետ կառավարման մեխանիզմերով: Նախատեսվում է վերանայել առկա ջրամատակարարման ցանցերի կառուցվածքը, գնահատել համակարգի բոլոր օղակների արդյունավետությունն ու սահմանել այն ուղղությունները, որոնք կարիք ունեն վերանորոգման կամ վերակառուցման:

Նշված ծրագրի շրջանակներում, առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսվում են շուրջ 30 կմ խմելու ջրի ցանցի վերանորոգում և արդիականացում՝ ներառելով համայնքի ամբողջ տարածքը:

XIX. **ԿՈՅՈՒՂԻ**

Փարաքար և Թաիրով բնակավայրերում կոյուղային ցանցը մասամբ առկա է, սակայն գործում է թերի հզորությամբ ու չի համապատասխանում ժամանակակից տեխնիկական և բնապահպանական չափանիշներին, իսկ համայնքի մնացյալ բնակավայրերում նման ենթակառուցվածք առհասարակ բացակայում է: Համայնքը նախատեսում է փուլային բարեփոխումներ. նախ՝ գործող ցանցերի մշտական՝ սպասարկման որակի և հուսալիության բարձրացում, ապա՝ կոյուղու հասանելիության ընդլայնում դեպի չտարածվող բնակավայրեր:

Կոյուղային ցանցի մասամբ կամ ամբողջական բացակայությունը լուրջ խնդիրներ է առաջացնում համայնքի բոլոր բանակավայրերում, ստեղծելով սոցիալական անհարմարություններ:

Սույն ռազմավարական մոտեցումը կձևավորի կայուն, անվտանգ և երկարաժամկետ շահագործման համակարգ, որը կընդգրկի համայնքի ամբողջ տարածքը՝ պաշտպանելով միջավայրը և ապահովելով բարձր կենսամակարդակ բոլոր բնակիչների համար:

XX. **ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ**

Փարաքար համայնքի բոլոր բնակավայրերն ապահովված են էլեկտրական հոսանքով, ինչը համայնքի կենսագործունեության, տնտեսության զարգացման և բնակիչների առօրյա հարմարավետության առանցքային նախապայմաններից է: Համայնքը դիտարկում է էլեկտրամատակարարման համակարգի շարունակական բարելավումը՝ որպես ռազմավարական ուղղություն՝ միտված բարձր հուսալիության, էներգաարդյունավետության և հնարավոր խափանումների

կանխարգելման ապահովմանը: Համայնքային իշխանությունների կողմից խրախուսվում են նաև ալտերնատիվ էներգետիկ համակարգերի զարգացմամբ: Մերձավանում է գործում արևային ամենամեծ կայանը, իսկ համայնքի գրեթե բոլոր գյուղերում առկա են նաև արևային ջրատաքացուցիչներ և արևային կայաններ:

XXI. ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ

Փարաքար համայնքի բոլոր բնակավայրերում առկա է գազաֆիկացման համակարգ, ինչը էական պայման է բնակչության կենսապայմանների բարելավման, էներգակիրների հասանելիության և անվտանգության ապահովման համար: Սակայն առանձին փողոցներում գազամատակարարումը դեռևս բացակայում է, ինչը ստեղծում է անհամաչափ պայմաններ համայնքի տարբեր հատվածների բնակիչների համար: Համայնքը նախատեսում է շարունակել համակարգի կատարելագործման գործընթացը՝ ներառելով գազամատակարարման ընդլայնում այն տարածքներում, որտեղ այն դեռևս հասանելի չէ: Այս գործընթացը կիրականացվի համաձայն զարգացման ռազմավարության, բնակիչների պահանջարկի և տեխնիկական իրագործելիության սկզբունքների՝ համատեղ համագործակցությամբ պատկան մարմինների և շահագրգիռ կողմերի:

Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է մինչև 7 կմ գազատարների կառուցում, որը կբարելավի համայնքի բնակիչների կենսապայմանները:

XXII. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Փարաքար համայնքում կենցաղային թափոնների հավաքման և հեռացման գործընթացը կազմակերպվում է մրցույթում հաղթած մասնագիտացված կազմակերպության կողմից՝ համայնքի բոլոր բնակավայրերում միասնական և կենտրոնացված սկզբունքով: Աղբավայրեր համայնքի տարածքում առկա չեն:

Աղբի հավաքման և հեռացման գործառույթները արդյունավետ կառավարելու նպատակով մշակված է համապատասխան սխեմա, որը ուղեցույց է օպերատորների համար:

XXIII. **ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

Փարաքար համայնքի բոլոր բնակավայրերում գործարկվում է փողոցային լուսավորության համակարգը, որը համայնքային միջավայրի անվտանգության, բնակչության հարմարավետության և գիշերային ժամերին կենսագործունեության կարևոր նախապայման է: Համակարգը շարունակաբար գտնվում է համայնքի ուշադրության կենտրոնում, քանի որ ժամանակակից պահանջները պայմանավորում են դրա անխափան և արդյունավետ գործարկման անհրաժեշտությունը: Չնայած առկա լուսավորական ցանցին, որոշ հատվածներում կարող են առաջանալ անսարքություններ՝ պայմանավորված հուսանքի տատանումներով, հենասյունների տեխնիկական վիճակով և լուսատուների մաշվածությամբ: Համայնքը նախատեսում է աստիճանաբար վերանայել լուսավորության ամբողջ համակարգը՝ նպատակ ունենալով բարձրացնել ծառայության հասանելիությունը և ապահովել լուսավորության համաչափ հասանելիություն համայնքի բոլոր հատվածներում:

Նախատեսվում է սահմանված 5 տարիների ընթացքում կառուցել և վերակառուցել շուրջ 10 կմ փողոցային լուսավորության ցանց:

XXIV. **ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐ**

Համայնքի բոլոր բնակավայրերում գործում են գերեզմանատներ, որոնք համայնքային ենթակառուցվածքների առանձնահատուկ նշանակություն ունեցող հատվածներից են: Գերեզմանների կառավարումը իրականացվում է համայնքային ենթակայության կառույցի միջոցով: Առանձնակի կարևորությամբ խնամվում են հայրենիքի համար զոհված զինծառայողների շիրիմները, որոնք ՀՀ

օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքային իշխանությունների կողմից մշտական հոգածության ներքո են:

XXV. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարչարարական համակարգի զարգացումը համայնքի կայուն և արդյունավետ կառավարման հիմնական նախապայմաններից է: Համայնքում վարչարարական համակարգի արդիականացումը և բարձր որակով հանրային ծառայությունների մատուցումն ուղղակիորեն նպաստում են բնակչության վստահության աճին, համայնք-բնակիչ հարաբերությունների ամրապնդմանը, ինչպես նաև համայնքային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Համայնքի բոլոր բնակավայրերում անհրաժեշտ է ապահովել թափանցիկ, հասանելի և արդյունավետ վարչարարական գործառույթներ՝ նպաստելով մասնակցային կառավարման և ժամանակակից թվային լուծումների ներդրմանը:

ՆՊԱՏԱԿԸ

Սույն ռազմավարության շրջանակում նախատեսվում է բարելավել վարչարարական համակարգի արդյունավետությունը, համայնքի բնակիչներին մատուցվող ծառայությունների որակը, ապահովելով համայնք-բնակիչ գործուն կապը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման թափանցիկությունը ու հաշվետվողականությունը:

Վերը նկարագրվածի տրամաբանությամբ դիտարկվում են հետևյալ խնդիրները՝

ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդիր 1. Վարչարարական ծառայությունների մատչելիության անհամաչափություն բնակավայրերում:

Խնդիր 2. Թվայնացված գործառույթների մասնակի հասանելիություն:

Խնդիր 3. Հասարակայնության անբավարար իրազեկվածություն համայնքային ծրագրերի, իրավունքների և ծառայությունների վերաբերյալ:

Խնդիր 4. Կադրային պակաս, մասնագիտական կարողությունների զարգացման կարիք համայնքապետարանում:

Խնդիր 5. Փաստաթղթաշրջանառության և գործառույթների ավտոմատացման ցածր մակարդակ:

Խնդիր 6. Տեղական ինքնակառավարման մարմնի և բնակչության միջև հաղորդակցության ոչ բավարար մակարդակ:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործողություն 1.1 Համայնքապետարանի վարչական աշխատակազմի վերապատրաստման ծրագրերի իրականացում:

Գործողություն 1.2 Բոլոր բնակավայրերում վարչական ծառայությունների հասանելիության ապահովում:

Գործողություն 1.3 Հանրային հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների զարգացում՝ հանրային լսումներ, բաց նիստեր և առցանց հաղորդակցման հարթակներ:

Գործողություն 1.4 Համայնքային բյուջեի, զարգացման ծրագրերի և որոշումների վերաբերյալ բնակչության իրազեկման արշավների կազմակերպում:

Գործողություն 1.5 Համայնքի կայքի արդիականացում՝ տեղեկատվական թարմացումներով, թվային դիմումների և բողոքների ընդունման հնարավորությամբ:

Գործողություն 1.6. Համայնքապետարանի ներքին կառավարման գործընթացների վերանայում՝ արդյունավետության բարձրացման նպատակով:

XIX. **ՖԻՆԱՆՍՆԵՐ**

Համայնքի զարգացումը մեծապես կախված է ֆինանսական հնարավորություններից, ինչպես նաև նրա արդյունավետ կառավարումից: Բյուջեն տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ-երին) Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագիր է, բյուջեն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծախսերի համապարփակ թվարկումն է՝ տվյալ բյուջետային տարվա ընթացքում կառավարման մարմինների յուրաքանչյուր գործառույթի գծով:

Համայնքի ֆինանսական միջոցները խիստ սահմանափակ են՝ դրանց բաշխումը պետք է իրականացվի բացառապես ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների սահմաններում: Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, համայնքի բյուջեն եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի զարգացման ծրագրերի և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը: Բյուջեն ցանկացած համայնքի ֆինանսական ամենահիմնական փաստաթուղթն է, որտեղ ներկայացված են համայնքի քաղաքականությունը, տարեկան գործունեության պլանավորումը և հսկողությունը: Այն ներառում է տվյալ տարվա համար պլանավորվող ծրագրերը, միջոցառումները, եկամուտների կանխատեսումները և այն ծախսերի նախահաշիվները, որոնք անհրաժեշտ են պլանավորվող ծրագրերն ու միջոցառումները ֆինանսավորելու համար:

Համայնքի 2025-30 թվականների ֆինանսական եզրահանգումները կատարվել են ուսումնասիրելով վերջին տարիներին այդ ոլորտի ֆինանսական հոսքերը: Ծրագրի մշակման նախնական փուլում կատարվել են համեմատական վերլուծություններ՝ Փարաքար համայնքի 2023 թվականի փաստացի արդյունքների, 2024 թվականի հաստատված և 2025 թվականի կանխատեսվող ցուցանիշների հետ: Այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Ժամկետը	Եկամուտները /հազ. դրամ/	Ծախսերը /հազ. դրամ/	Բյուջեի հավելուրդ կամ դեֆիցիտ
2023թ. փաստացի	1.164.863,532	978.159,576	0
2024 թ. հաստատված	1.470.000,000	1.477.838,000	239733.016
2025թ. կանխատեսվող	1.720.000,000	1.720.000,000	703829.7934

2023-25 թվականների Փարաքար համայնքի եկամուտների հավաքական պատկերը ներկայացվում է ստորև ներկայացվող աղյուսակի միջոցով՝

Հ/Հ	Եկամուտների անվանումները	2023թ. Փաստացի	2024թ. Հաստատված	2025թ. Կանխատեսվող
1	Հողի հարկ	25239,369	20000,00	18350,00
2	Գույքահարկ /շինությունից/	20502,148	17300,00	15800,00
3	Անշարժ գույքի հարկ	117532,96	138000,00	192400,00
4	Գույքահարկ /փոխադրամիջոցից/	219662,80	246000,00	305000,00
5	Տեղական տուրքեր	34265,255	33800,00	43906,00
6	Վարձակալված հողի և գույքի վճար	13829,74	16000,000	15844,605
7	Տեղական վճար	103651,42	132027,00	112060,00
8	Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար	57849,44	69000,00	91500,00
9	Մուտքեր տույժերից, տուգանքներից	3700,00	0,000	500,00

10	Այլ եկամուտներ	24516,552	31437,422	11649,711
11	ՀՀ Պետ բյուջեից դոտացիա	538802,20	761424,278	907 978,384
12	Ազգային նվագարանների գծով սուբվենցիա	5 311,65	5011,30	5011,30
	Ընդամենը վարչական բյուջե	1164863,532	1470000,000	1720000,000
13	Հողի օտարումից եկամուտ	156556,941	125266,984	120866,395
14	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	800,000	0,000	2000,000
15	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	165872,416	101500,000	225303,812
16	Ֆոնդային բյուջեի ազատ մնացորդ	242745,46	239733,016	703829,7934
	Ընդամենը վարչական և ֆոնդային բյուջե	1730838,350	1936500,000	2772000,000
	Զուտ եկամուտ	943979,04	930331,406	807010,316

Ինչ վերաբերում է նույն ժամանակահատվածի համար կատարված ծախսերին, ապա այն ունի հետևյալ քանակական տեսքը՝

Հ/Հ	Ծախսերի բնագավառները	2023թ. Փաստացի	2024թ. Հաստատված	2025թ. Կանխատեսվող
1	Համայնքապետարան	323964,890	519954,00	530864,00
2	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	42614,077	81853,85	95000,00
3	Քաղաքացիական պաշտպանություն			11990,00
4	Գյուղատնտեսություն		500,00	1000,00
5	Աղբահանում	135745,645	155500,00	177942,00
6	Կեղտաջրերի հեռացում	19771,700	13654,00	19890,00

7	Փողոցների լուսավորություն	24511,218	35000,00	40000,00
8	Ոռոգում			3000,00
9	Հանգստի և սպորտի ծառայություններ	20000,000	20000,00	20000,00
10	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	45000,000	65900,00	70000,00
11	Նախադպրոցական կրթություն	281062,446	303200,00	330663,30
11,1	Պետության կողմից նպաստի ձևով պարտադիր վերապատրաստված մանկավարժների ծախսերի փոխհատուցման գումար			11336,70
12	Արտադպրոցական դաստիարակություն	72622,500	92000,00	84688,70
	Արվեստի դպրոց Ազգային նվագ. փոխհատուց			5011,30
	Պետության կողմից նպաստի ձևով արտադպրոցական ծրագրեր իրականացնող կամավոր ատեստավորված մանկավարժներին տրամադրվող լրավճար			2300,00
13	Սոց օգնություն	12867,100	16000,00	16000,00
14	Պահուստային ֆոնդ (վարչ. բյուջե)		174276,15	300314,000
	Ընդամենը	978159,576	1477838,00	1720000,00
15	Շենքեր և շինությունների կառուցում	432472,167	400500,0	819133,600
16	Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում	36846,547	1000,0	160000,000
17	Վարչական սարքավորումներ	12662,100	45 000,00	50866,40
18	Նախագծահետազոտական ծախսեր	17743,000	20 000,00	22000,00
	Ընդամենը	1477883,39	1944338,00	2772000,00

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի մասնագիտական կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Համայնքի 2025-30 թ. զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Համայնքային բյուջեի հավաքագրման գործում ակտիվ շահագրգիռ մոտեցում պետք է ցուցաբերեն համայնքի բնակչությունը, բնակավայրերի ղեկավարները, համայնքի ավագանին, համայնքային կազմակերպությունների աշխատակիցները:

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի համաձայն համայնքի 2025 թվականի բյուջեն բաղկացած է 2 բաղկացուցիչ մասերից՝

- Համայնքի բյուջեի վարչական մաս /վարչական բյուջե/
- Համայնքի բյուջեի ֆոնդային մաս /ֆոնդային բյուջե/

Բյուջեի այդ բաղկացուցիչ մասերը հավասարակշռված են:

Բյուջեի եկամուտների /ծախսերի/ կանխատեսման և դրանց նախահաշիվների կազմման աշխատանքներն իրականացվում են ինչպես վարչական բյուջեի, այնպես էլ ֆոնդային բյուջեի համար առանձին: Բյուջեի եկամտային մասում ընդամենը նախատեսվել են հարկեր և տուրքեր 575.456,0 հազ. դրամի չափով: Այլ եկամուտների գծով նախատեսվում է տարվա ընթացքում հավաքագրել՝ 231.554.3 հազ. դրամ: Նախագծում ներառվել է նաև ՀՀ Կառավարության կողմից Փարաքար համայնքին համահարթեցման սկզբունքով 2025 թվականի համար հատկացված 907.978,384 հազ. դրամի չափով դոտացիա: Պետության կողմից տրամադրվում է նպատակային հատկացումներ (սուբվենցիա)՝

համայնքի արվեստի դպրոցում ազգային նվագարաններով սովորողների ուսման վարձի հատուցման նպատակով 5011.3 հազ. դրամ:

Փարաքար համայնքի 2025-30 թվականների ռազմավարական զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կհավաքագրվեն օրենսդրությամբ սահմանված կարգով, այն կկրի դինամիկ զարգացման բնույթ, կծախսվի համահավասարության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների հիման վար և կնպաստի համայնքի բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը, ապահովելով վերը նկարագրված ծրագրերի, քայլերի, գործողությունների բնականոն իրականացումը:

XXVI. **ԱՄՓՈՓՈՒՄ**

Փարաքար համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը հանդիսանում է համալիր, համակարգված և երկարաժամկետ ռազմավարական փաստաթուղթ, որի նպատակն է ապահովել համայնքի համաչափ առաջընթացն ու բարեկեցության շարունակական բարձրացումը: Սույն ռազմավարությունը անդրադարձել է Փարաքար համայնքի բնակչության կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներին: Ամենուր ձևակերպված են հավակնոտ նպատակներ, մարդկային ու պրոֆեսիոնալ անհրաժեշտ ցանկություն և եռանդ այդ նպատակներին հասնելու համար:

Ծրագրի մշակման ողջ ընթացքում մենք առաջնորդվել ենք համայնքային շահի գերակայության սկզբունքով՝ յուրաքանչյուր ոլորտ դիտարկելով որպես փոխկապակցված համակարգի մաս:

Կիրառվել են մասնակցային կառավարման մոտեցումներ՝ մասնագետների և գործընկեր կառույցների ակտիվ ներգրավմամբ: Այս գործընթացը ոչ միայն նպաստել է ծրագրի իրատեսական ու գործնական բնույթի ապահովմանը, այլև ստեղծել է համախմբվածության, ընդհանուր պատասխանատվության և վստահության մթնոլորտ:

Սույն ռազմավարության իրականացման ընթացքում պլանավորված է սահմանված ժամկետում կատարված աշխատանքների արդյունքները վերլուծել, հնարավոր բացթողումները պարզել, որպեսզի բացառվեն հետագա ցանկացած անճշտություններ: Պլանավորված է նաև արդյունքների ամփոփման արդյունքում անհրաժեշտ խմբագրումներ կատարել առավել արդյունավետ արդյունքներ արձանագրելու համար:

Ծրագրում արտացոլված են ոչ միայն համայնքի առկա խնդիրները, այլև այն հնարավորությունները և զարգացման վեկտորները, որոնք կարող են նպաստել համայնքի կայուն առաջընթացին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել քաղաքաշինական ենթակառուցվածքների արդիականացմանը, գյուղատնտեսական ոլորտի խթանմանը, բնակիչների զբաղվածության մակարդակի բարձրացմանը, բնապահպանական ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաև կրթական և մշակութային կյանքի աշխուժացմանը:

Այս ծրագրի միջոցով մենք հաստատում ենք մեր հանձնառությունը՝ առաջնորդել համայնքը դեպի երկարաժամկետ զարգացում, ապահովել արդար և ներառական միջավայր համայնքի բոլոր բնակիչների համար և ձևավորել Փարաքարն իբրև մրցունակ, անվտանգ ու համայնքային արժեքներին հիմնված տարածք կայուն ձևակերպումը:

Փարաքար համայնքի 2025-30 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի կառավարման պատասխանատուները համոզված են, որ հանրային մասնակցությունը կբացառի ցանկացած հնարավոր շեղումներ և մշակել են համապատասխան ծրագրեր իրականացման աշխատանքներում լայն ներառականություն ապահովելու համար:

Սիրելի փարաքարցիներ, համագործակցային համակեցությունը միակ երաշխիքն ու հնարավորություն է ցանկացած՝ առավել ևս մեր համայնքի զարգացման համար:

Հավելված 1

ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025-2030 ԹԹ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 85
1.1 Փաստաթղթի մշակման անհրաժեշտությունները..... 85
1.2 Գույքի կառավարման անհրաժեշտությունը 87
1.3 Գույքի բնորոշումները..... 88
2. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ 7
2.1 Միասնական կառավարման մասին 90
3. ՆՊԱՏԱԿԸ..... 99
4.ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 99

5.ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15
6. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ..... 101
7.ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 102

1. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1.1 ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղական ինքնակառավարման համակարգի կարևոր գործառույթներից է համայնքին պատկանող գույքի արդյունավետ կառավարումը: Համայնքի սեփականությունը հանդիսացող գույքը ներառում է այն ռեսուրսները, որոնք համայնքը կարող է օգտագործել՝ իր սոցիալ-տնտեսական զարգացումը ապահովելու, բնակչությանը հանրային ծառայություններ մատուցելու և համայնքային շահերը սպասարկելու նպատակով: Համայնքի գույքի կառավարման

և զարգացման ռազմավարական ծրագիրը կարևոր նախապայման է կայուն և արդյունավետ տեղական կառավարման համակարգ ձևավորելու համար:

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գույքի կառավարման և զարգացման հնգամյա ռազմավարական ծրագիրը այն հիմնական փաստաթուղթն է, որը սահմանում է համայնքի գույքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, պահպանման և զարգացման ուղղությունները առաջիկա հինգ տարիների համար: Ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի գույքային համակարգում առկա խնդիրների առաջնահերթությունները, դրանց լուծման անհրաժեշտությունը, ինչպես նաև ֆինանսատնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքները:

Համայնքային գույքը, լինելով համայնքի սեփականություն, ենթակա է հատուկ մոտեցման: Դրա չպլանավորված կամ անկանոն օգտագործումը կարող է հանգեցնել գույքի կորուստի, ֆինանսական ռեսուրսների վատնման և հանրային շահերի անտեսման: Հետևաբար, անհրաժեշտ է ունենալ հստակ մշակված ռազմավարություն, որը մի կողմից թույլ կտա գնահատել և լիարժեք օգտագործել առկա գույքը, մյուս կողմից՝ վերակազմակերպել և արդիականացնել համայնքի գույքային պոտենցիալը՝ երկարաժամկետ նպատակներով:

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գույքի կառավարման և զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի մշակումը հնարավորություն է տալիս կազմել համայնքի գույքի ամբողջական և թարմացված պատկերը, ինչպես նաև վերլուծել գույքի օգտագործման ներկա վիճակը և դրանից բխող խնդիրները և սահմանել գույքային ռեսուրսների օգտագործման ու զարգացման ուղղություններ: Ռազմավարական ծրագրի մշակումը Փարաքար համայնքի զարգացմանը միտված կարևոր քայլ է, որը նպաստում է ռեսուրսների արդյունավետ կառավարմանը և զարգացմանը:

Հաշվի առնելով վերագրյալը համայնքային իշխանությունների կողմից նախաձեռնվել է համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման սույն ռազմավարության մշակումը, որի գործարկումը կնպաստի համայնքի ընդհանուր բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

1.2 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գույքի կառավարման և զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի կարևոր գործառույթներից է համայնքապատկան գույքի արդյունավետ և հաշվետու կառավարումը: Գույքի կառավարման և զարգացման ռազմավարական մոտեցումը կարևոր նախապայման է կայուն և արդյունավետ տեղական կառավարման համակարգ ձևավորելու համար:

Համայնքային գույքը ներառում է հողատարածքներ, շենք-շինություններ, մշակութային, կրթական և սոցիալական նշանակության օբյեկտներ և այլն: Համայնքային գույքի արդյունավետ կառավարումը պահանջում է համակարգված մոտեցում, որը կներառի գույքի հաշվառման, գնահատման, օգտագործման և պլանավորման կայուն համակարգեր:

Գույքի կառավարման միասնական ռազմավարական ծրագիր ունենալու անհրաժեշտությունն առաջանում է մի շարք գործոններից, օրինակ՝ գույքի ոչ նպատակային կամ անարդյունավետ օգտագործումը հանգեցնում է ֆինանսական կորուստների, շատ բնակավայրերում առկա են չօգտագործվող կամ վատ տեխնիկական վիճակում գտնվող գույքեր, որոնք կարող են վերածվել եկամտաբեր ռեսուրսների և ծառայել համայնքային կյանքի բարելավմանը: Գույքի արդյունավետ կառավարումը թույլ կտա մեզ կազմել ամբողջական և հստակ գույքային բազա, իրականացնել օգտագործման պլանավորում՝ ըստ համայնքի կարիքների: Առանց կառավարման հստակ համակարգի՝ գույքը կարող է կորցնել իր արժեքը և հնարավորությունները: Հետևաբար, համայնքային գույքի կառավարման համակարգված և նպատակային կազմակերպումը հանդիսանում է տեղական ինքնակառավարման արդյունավետության, բնակչության կարիքների բավարարման և համայնքային շահերի պաշտպանման անբաժանելի պայման:

1.3 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը համայնքի տնտեսական և սոցիալական զարգացման կարևորագույն ռեսուրսներից մեկն է: Այն ներառում է հողային տարածքները, շենքերը և շինությունները, տրանսպորտային ենթակառույցները, ոռոգման և խմելու ջրի, ինչպես նաև կոմունալ տնտեսության համայնքային սեփականություն հանդիսացող համակարգերն ու պարագաները, որոնք հանդիսանում են համայնքի կենսագործունեության և զարգացման հիմքը:

Փարաքար համայնքում անշարժ գույքի համակարգված և ռազմավարական կառավարումը նպատակ ունի ապահովել այդ ռեսուրսների արդիական գնահատումը, նպատակային օգտագործումը և պահպանումը՝ հանուն համայնքի կայուն զարգացման:

Համայնքի հողատարածքների բազմազանությունը, այդ թվում՝ գյուղատնտեսական, հասարակական, պատմամշակութային և էկոլոգիական նշանակության հողերը, ինչպես նաև տարբեր գործառույթներով շինությունները, պահանջում են հատուկ մոտեցում: Համայնքի հողատարածքները ընդգրկում են տարբեր կարգի և նշանակության հողամասեր՝ ըստ դրանց օգտագործման նպատակի: Հողային տարածքները ներառում են՝

- ոռոգվող կամ չոռոգվող հողատարածքներ,
- հողեր, որոնք երբևէ չեն օգտագործվել կամ ժամանակավորապես չեն շահագործվում,
- վարձակալության հանձնված հողատարածքներ,
- հասարակական օգտագործման հողեր (պուրակներ, այգիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ և այլն),
- պատմամշակութային նշանակության հողամասեր:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են համայնքի սեփականությունը համարվող հողատեսքերի ամփոփ տեղեկատվությունը.

Աղյուսակ 1.

Հ/Հ	Հողատարածքները	Գյուղ.	Բնակավայր.	Արդյուն.,	Էներգ.,	Հատուկ	Ջրային

		Ն2		ընդերք օգտ.	կապի, կոմունալ ենթակառուցվ.	պահպ.	
1.	ԸՆդհանուր	1257.59	86.64	82.68	1.83	28.7	12.3
2.	Ոռոգվող	549.7	0	0	0	0	0
3.	Չոռոգվող	707.89	0	0	0	0	0
4.	Օգտ. և վարձ չտրված	950.6	279.67	76.67	1.71	0	12.3
5.	Վարձակալված	306.99	6.37	6.0	0.12	0	0
6.	Հասարական նշ.	0	14.96	0	0	0	0
7.	Պատմամշակութ.	0	0	0	0	28.7	0

Շենքերը և շինությունները ներառում են համայնքային սեփականություն հանդիսացող՝

- վարչական և հասարակական նշանակության շենքեր,
- կրթական, մշակութային, առողջապահական հաստատություններ,
- քաղաքաշինական տարրեր և ենթակառուցվածքներ, այդ թվում՝ կամուրջներ, կանգառներ, ճանապարհներ:

Աղյուսակ 2

Հ/Հ	Համայնքապատկան գույքերի անվանումներ	Չափման միավոր	Գույքերի քանակ
1	Վարչական շենք	միավոր	9
2	Մանկապարտեզ	միավոր	9
3	Մշակույթի տուն	միավոր	7
4	Բուժամբուլատորիա	միավոր	9
5	«Արմաթ» լաբորատորիա	միավոր	2
6	Ճանապարհ	կմ	261
7	Կանգառ	միավոր	36

8	Կամուրջ	միավոր	10
9	Հուշարձան	միավոր	7
10	Այգի	միավոր	8
11	Պուրակ	միավոր	3

Փարաքարաքարհամայնքի անշարժ գույքի համակարգված դասակարգումը և գույքի կառավարման ռազմավարական մոտեցումները կարևոր հիմք են համայնքի ռեսուրսների ճշգրիտ օգտագործման համար: Այս ծրագրի շնորհիվ հստակեցվում է համայնքի գույքի ներկա կարգավիճակը, գույքի արդյունավետ օգտագործումը և կանխվում ռեսուրսների վատնումը:

2. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2.1 ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության որոշ համայնքներում վերջին տարիներին անշարժ գույքի կառավարման բարելավմանն ուղղված որոշ նախաձեռնություններ են իրականացվում: Տարբեր համայնքներում իրականացվում են ծրագրեր, որոնք հիմնականում ուղղված են հողերի և համայնքային գույքի կադաստրային հաշվառմանը, տվյալների թվայնացմանը, ինչպես նաև օգտագործման իրավական կարգավիճակի հստակեցմանը: Սակայն այս ծրագրերը, որպես կանոն, մասնակի բնույթ են կրում և չեն ապահովում համապարփակ ու ռազմավարական մոտեցում համայնքային գույքի կառավարմանը:

Փարաքար համայնքում ներկայումս նմանատիպ ամբողջական ծրագիր առկա չէ: Գույքային ռեսուրսների կառավարման գործընթացը դեռևս ամբողջապես համակարգված չէ, տարբեր ստորաբաժանումների միջև կա տեղեկատվական անջատվածություն, ինչը խոչընդոտում է գույքի ամբողջական պատկերացմանը և արդյունավետ օգտագործմանը: Գոյություն չունի մեկ միասնական հարթակ կամ ծրագիր, որը կապահովի համայնքի բոլոր հողային և շինարարական ռեսուրսների

կենտրոնացված հաշվառումը, դասակարգումը և մշտադիտարկումը, չնայած հանգամանքին, որ համայնքների միասնական տեղեկատվական համակարգում նախատեսված են անհրաժեշտ պատուհաններ, այս գործառույթները ինչ-որ չափով կառավարելի դարձնելու համար:

Ստեղծված իրավիճակում Փարաքար համայնքի համար գերակա նշանակություն ունի միասնական կառավարման համակարգի ներդրումը: Նման համակարգը թույլ կտա կենտրոնացնել համայնքի ամբողջ անշարժ գույքը՝ հստակ նկարագրված կարգավիճակով, օգտագործման նպատակով և իրավական հիմքերով: Դա հնարավորություն կստեղծի համայնքին ունենալ ամբողջական և թարմացված տեղեկատվություն իր ռեսուրսների վերաբերյալ, իրականացնել արդյունավետ պլանավորում, ինչպես նաև բացառել գույքի վատնումը կամ ոչ նպատակային շահագործումը:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքները, որպես անշարժ գույքի հիմնական բաղադրիչներ, ընդգրկում են տարբեր նշանակության տարածքներ՝ գյուղատնտեսական, բնակավայրերի, արդյունաբերական, հատուկ պահպանվող, ինչպես նաև ջրային և էներգետիկ: Ստորև ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նպատակային նշանակության գրաֆիկական պատկերը հեկտարներով:

Գծապատկեր 2



Համայնքի զարգացման ռազմավարական ծրագրավորման գործընթացում հողի ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործումը կարևոր նշանակություն ունի: Ինչպես նշված է աղյուսակ 1-ում Փարաքար համայնքի տարածքում առկա է ընդհանուր 1669.73 հա մակերեսով համայնքային հողատարածքներ, որը ներառում է տարբեր կատեգորիայի հողամասեր՝ յուրաքանչյուրն իր գործառնական նշանակությամբ: Այս հողերը ներառում են ինչպես ոռոգվող և չոռոգվող տարածքներ, այնպես էլ ժամանակավորապես չշահագործվող, վարձակալության չհանձնված հողամասեր, վարձակալության հանձնված հողատարածքներ, հասարակական օգտագործման տարածքներ՝ զբոսայգիներ, պուրակներ, խաղահրապարակներ, պատմամշակութային նշանակության հողեր: Գծապատկեր 2-ում ներկայացված է համայնքային հողատարածքների ներկա իրավիճակի գրաֆիկական պատկերը (ներկայացված հողատարածքների չափերը նշված են հեկտարային միավորով):

Գծապատկեր 2



Այս հողերը պետք է դիտարկվեն ոչ միայն որպես տարածքային ռեսուրս, այլ նաև որպես համայնքի սոցիալ-տնտեսական և մշակութային հնարավորությունների զարգացման հիմք: Հողերի նման կառուցվածքը համայնքին հնարավորություն կտա իր ներքին ռեսուրսների հաշվին ապահովել երկարաժամկետ զարգացման մի շարք ուղղություններ՝ հիմք դնելով տնտեսության զարգացման, ներդրումային ծրագրերի իրականացման, մշակութային ժառանգության ընդգծման և զբոսաշրջային հնարավորություններ զարգացնելու: Այս փուլում առաջնահերթ է դառնում հողերի քարտեզագրումը, հասարակական նշանակության տարածքների բարելավումը և մշակութային հուշարձանների պահպանությունը՝ որպես համայնքի կարևոր մաս: Տվյալ ռեսուրսների արդյունավետ կառավարումը կիրականացվի հատուկ մոտեցմամբ՝ ներառելով ինչպես համայնքի կարիքները, այնպես էլ համայնքային գույքի զարգացման երկարաժամկետ տեսլականը: Սակայն արդյունավետ կառավարման համար առկա են մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են առաջնային լուծում: Դրանցից են՝

Քարտեզագրման անճշտությունները.Համայնքի հողային ռեսուրսների զարգացման արդյունավետության համար անհրաժեշտ է վերանայել և ուղղել քարտեզագրման գործընթացում առաջացած փաստացի և իրավական շեղումները, որոնք խոչընդոտում են հողատարածքների հստակ սահմանազատմանը և նպատակային օգտագործմանը: Այսպիսով նախատեսված է կազմակերպել Փարաքար համայնքի հողատարածքների նոր քարտեզագրում՝ հիմնվելով արդի գեոդեզիական չափումների, տեղանքի իրական վիճակի և առկա իրավական փաստաթղթերի վրա: Սա թույլ կտա ձևավորել միասնական և ճշգրտված հողային բազա՝ հողերի օրինական օգտագործումն ու հաշվառումը ապահովելու համար:

Համայնքային գույքի սեփականության վկայականների բացակայությունը. Համայնքային գույքի նկատմամբ իրավական վերահսկողության և արդյունավետ տնօրինման գործընթացի համար խոչընդոտ է հանդիսանում իրավունքի պետական գրանցման վկայականների բացակայությունը: Այս հանգամանքը էապես դանդաղեցնում է այդ գույքերի օգտագործման, վարձակալության հանձնման, տնտեսական շրջանառության մեջ ներգրավման և ներդրումային ծրագրերի իրագործման գործընթացները: Իրավական փաստաթղթերի իրավաչափ իրողությունը կնպաստի Փարաքար համայնքին առկա ռեսուրսները արդյունավետ կառավարել և արձանագրել հավելյալ եկամուտների աճ, ինչը դրականորեն կազդի համայնքի բյուջեի վրա: Այս խնդրին անհրաժեշտ է առաջնային լուծում: Փարաքար համայնքի շատ գույքեր դեռևս չունեն իրավունքի պետական գրանցման վկայականներ, գույքերի օտարման և վարձակալության տրամադրման համար անհրաժեշտ կլինի երկարատև ժամանակահատված համապատասխան իրավական գործընթաց կազմակերպելու համար: Համայնքային գույքերի պետական գրանցման վկայականների առկայության դեպքում, այն նաև կնպաստի հողային ռեսուրսների փաստացի և իրավական տվյալների միջև առկա անհամապատասխանությունների կարգավորմանը ճշգրիտ քարտեզագրման և չափագրման շնորհիվ:

Հողատարածքներ, որոնք երբևէ չեն օգտագործվել կամ ժամանակավորապես չեն շահագործվում. Չօգտագործվող և ժամանակավորապես չշահագործվող

հողերի առկայությունը Փարաքար համայնքի հողային ռեսուրսների կառավարման և նպատակային օգտագործման կարևոր խնդիրներից է: Նման հողատարածքները, որոնք համայնքի սեփականությունն են, հաճախ չեն ներառվում տնտեսական գործունեության մեջ, ինչը բացասաբար է ազդում ինչպես համայնքի տնտեսական զարգացման, այնպես էլ գյուղատնտեսության զարգացման վրա: Դիտարկելով գծապատկեր 2-ը, նկատելի է, որ համայնքային գույքի զգալի մասը օգտագործման և վարձակալության չտրամադրված գույք են, որի մակերեսը կազմում է 1308.65 հեկտար: Այսպիսով, այս գույքերը մեծ հնարավորություն են համայնքի զարգացման համար: Մասնավորապես, 950.6 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողատարածքների նպատակային օգտագործումը՝ վարձակալության կամ սեփականության իրավունքով բնակչությանը տրամադրելու միջոցով, կարող է զգալիորեն խթանել գյուղատնտեսության զարգացմանը և ապահովել բնակչությանը աշխատատեղերով ու եկամուտներով: Միաժամանակ, այս գործընթացը դրական ազդեցություն կունենա համայնքի բյուջեի համալրման վրա՝ ստեղծելով նոր եկամուտի աղբյուրներ: Սակայն համայնքի հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման և գյուղատնտեսության զարգացման գործընթացում ի հայտ է գալիս ևս մեկ կարևոր խնդիր՝ գյուղատնտեսական նշանակության հողատարածքների ոռոգման խնդիրը: Ինչպես ներկայացված է աղյուսակ 1-ում գյուղատնտեսական հողերի ընդամենը 43.71%-ն է ոռոգելի: Շատ դեպքերում ոռոգման համակարգերը կամ բացակայում են, կամ գտնվում են վատթար տեխնիկական վիճակում, ինչի արդյունքում որոշ հատվածներ հնարավոր չէ օգտագործել ամբողջ ծավալով: Հաշվի առնելով ոռոգման համակարգերի կենսական նշանակությունը՝ պետք է ձեռնարկել քայլեր դրանց վերանորոգման, վերակառուցման ուղղությամբ՝ ներգրավելով համայնքային ռեսուրսներ: Ուստի սույն ռազմավարության տեսլականը երկու հիմնախնդիրները միասնական դիտարկելն է, քանի որ գյուղատնտեսական հողատեսքերը գրավիչ չեն պոտենցիալ վարձակալների համար, եթե նրանք ոռոգման կարողություններից զուրկ են:

Ներկա իրավիճակը համայնքային սեփականություն հանդիսացող կանգառների վերաբերյալ. Փարաքար համայնքի 9 բնակավայրերում առկա է ընդհանուր 32 կանգառ: Կանգառների զգալի մասը կամ ամբողջությամբ բացակայում է, կամ գտնվում է մաշված և ոչ բարվոք վիճակում: Վերջին տարիներին նկատվում է համայնքային սեփականություն հանդիսացող կանգառների ֆիզիկական վիճակի շարունակական վատթարացում: Մի շարք կանգառներում բացակայում են տարրական ենթակառուցվածքները՝ ծածկույթներ, նստատեղեր, լուսավորություն և սպասասրահներ: Սա հանգեցնում է այն բանին, որ քաղաքացիները ստիպված են լինում սպասել հանրային տրանսպորտին առանց պաշտպանվածության՝ եղանակային պայմաններից, ինչն իր հերթին նվազեցնում է հասարակական տրանսպորտի մատչելիության և հարմարավետության մակարդակը:

Փարաքար համայնքում նախատեսում է ձեռնարկել կանգառների համակարգված վերանորոգում և ենթակառուցվածքների համալրում՝ ապահովելու քաղաքացիների անվտանգ, հարմարավետ սպասարկման միջավայրը:

Մի քանի խոսքով ներկայացվում է առկա պատկերը ճանապարհների վերաբերյալ. Փարաքար համայնքի տարածքով է անցնում միջպետական նշանակության Մ5 մայրուղին: Համայնքի տարածքում գտնվող միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհները հիմնականում գրունտային են, խճապատված, գտնվում են ոչ բարվոք վիճակում: Համայնքի միջպետական նշանակության ճանապարհները կահավորված են ճանապարհային երթևեկության նշաններով, սակայն մյուս փողոցներում դրանք հիմնականում բացակայում են:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ նախաձեռնվում է իրականացնել ճանապարհների փուլային բարեկարգում՝ առաջնահերթություն տալով բնակչության կողմից առավել օգտագործվող ուղիներին, ինչպես նաև ներհամայնքային փողոցներում ապահովել երթևեկության նշանների տեղադրում:

Մշակութային տների մասին տվյալները խոսում են հետևյալ կերպ. Փարաքար համայնքում գտնվում է 6 Մշակույթի տուն: Մշակութային տների վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ դրանք արտաքինից գտնվում են բավարար կամ

նորմալ վիճակում, սակայն ներքին հատվածում շատերը կարիք ունեն վերանորոգման, իսկ որոշները՝ նաև ջեռուցման համակարգի ապահովման կամ վերականգնման:

Այգեկ բնակավայրում գտնվող մշակույթի տան ընդհանուր վիճակը կարելի է գնահատել որպես անմխիթար: Չնայած այն բանին, որ շինության կրող կառուցվածքները՝ պատերը և տանիքը, տեսողական զննման արդյունքում դիտվում են աշխատունակ, այնուամենայնիվ շենքում առկա են վթարային երևույթներ, որոնք վկայում են շենքի տեխնիկական անբավարար վիճակի մասին և պահանջում են մասնագիտական գնահատում և վերանորոգման աշխատանքներ: Հաշվի առնելով վերոգրյալ խնդիրները՝ նախատեսված է նախաձեռնել մշակութային տների տեխնիկական վիճակի համապարփակ ուսումնասիրություն, մասնագիտական գնահատում և համապատասխան վերանորոգման ու վերակառուցման աշխատանքների ծրագրավորում: Առանձնահատուկ ուշադրություն դարձնել ներքին ենթակառուցվածքների վերականգնմանը և ջեռուցման համակարգերի ապահովմանը՝ ապահովելով մշակութային կյանքի շարունակականությունը:

<u>Համայնքային սեփականություն հանդիսացող վարչական շենքերը.</u> Համայնքային սեփականություն հանդիսացող վարչական շենքերի մի մասը գտնվում է վերանորոգված վիճակում: Շենքերի կրող կառուցվածքները՝ պատերը, միջհարկային ծածկերը և տանիքը, տեսողական զննման արդյունքում գնահատվում են աշխատունակ: Չկան վթարային երևույթներ կամ վտանգ ներկայացնող խախտումներ:

Միաժամանակ, Փարաքար համայնքի 3 վարչական շենքեր գտնվում են վթարային կամ վատ վիճակում, որոնք պահանջում են վերանորոգում կամ վերականգնում: Վարչական շենքերի ներկայիս վիճակը նկատի ունենալով՝ նախաձեռնվում է կազմակերպել վթարային և վատ վիճակում գտնվող վարչական շենքերի տեխնիկական գնահատում և դրանք վերանորոգելու կամ վերականգնելու համապարփակ աշխատանքների իրականացում՝ ապահովելու կառույցների անվտանգությունն ու լիարժեք շահագործումը:

Այս համատեքստում առաջնահերթություն է Թաիրով գյուղում վարչական շենքի կառուցումը, որը կապահովի քաղաքաշինական արդի պահանջները:

Համայնքում գործում են բուժ.ամբուլատորիաներ, որոնք հիմնականում տեղակայված են համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում, որոնց առկա վիճակը համեմատած մյուս համայնքային գույքերի ամենաանմխիթարն է: Շենքերի մեծ մասը գտնվում է վատ, վթարային և ոչ բարվոք վիճակում, իսկ որոշները ունեն նոր մասնաշենքի կառուցման անհրաժեշտություն:

Հաշվի առնելով այս իրավիճակը՝ մշակվում է բուժամբուլատորիաների շենքերի տեխնիկական գնահատում, վերականգնումն ու նոր մասնաշենքերի կառուցման ծրագրման իրականացման գործընթաց՝ նպատակ ունենալով բարելավել առողջապահական ծառայությունների մատուցման պայմանները Փարաքար համայնքում:

Համայնքում գործում են 9 մանկապարտեզներ, որոնց շենքային պայմանները, ընդհանուր առմամբ վերանորոգված են: Շենքերի կրող կառուցվածքները՝ պատերը, միջհարկային ծածկերը և տանիքը, տեսողական զննման արդյունքում գնահատվում են աշխատունակ: Վթարային երևույթներ կամ վտանգ ներկայացնող խախտումներ չկան:

Սակայն Մուսալեռ, Պտղունք, Այգեկ բնակավայրերում գտնվող մանկապարտեզները գտնվում են վթարային վիճակում:

Նորակերտում և Այգեկում գործում են «Արմաթ» լաբորատորիաներ, որոնք գտնվում են վերանորոգված և կահավորված վիճակում: Սակայն Նորակերտ բնակավայրում գտնվող գրասենյակի տարածքում բացակայում է ջեռուցումը: Իսկ Այգեկ բնակավայրում գտնվող գրասենյակը գտնվում է Այգեկ բնակավայրի վարչական շենքի ներսում: Հաշվի առնելով ջեռուցման բացակայության խնդիրը, կնախաձեռնվի համապատասխան ջեռուցման համակարգի տեղադրում՝ ապահովելու աշխատակիցների և այցելուների հարմարավետությունն ու շենքի արդյունավետ շահագործումը:

Ինչ վերաբերում է համայնքային սեփականություն հանդիսացող և համայնքի վարչական տարածքում գտնվող հուշարձաններին, ապա կարող ենք նշել, որ

Փարաքար համայնքում նախկինում կառուցված և մեզ փոխանցված հուշարձանները հիմնականում պահպանված վիճակում են: Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանը, որը գտնվում է Փարաքար բնակավայրում այժմ գտնվում է բարեկարգման փուլում:

Համայնքային նշանակության այգիները. Փարաքար համայնքի բնակավայրերի այգիները ընդհանուր 7-ն են: Համայնքային նշանակության այգիները ներկայումս կարիք ունեն լրացուցիչ բարեկարգման, իսկ այն բնակավայրերում, որտեղ դրանք առկա չեն, նախատեսվում է կառուցել նոր այգիներ՝ համայնքի բնակիչների հանգստի, ժամանցի և բնության հետ շփման հնարավորությունները ընդլայնելու նպատակով:

3. ՆՊԱՏԱԿԸ

Սույն ռազմավարության նպատակն է՝ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի արդյունավետ կառավարման գործուն համակարգերի ներդրման միջոցով ավելացնել համայնքային եկամուտները ի նպաստ համայնքի բնակիչների բարեկեցության մակարդակի բարձրացման:

4. ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն ռազմավարության նախաձեռնող խմբի կողմից իրականացված ուսումնասիրությունների և տվյալների գնահատման արդյունքում բացահայտվեցին մի շարք խնդիրներ, որոնցից տվյալ փուլում առաջնահերթություն ենք համարում հետևյալ խնդիրների լուծումը:

Խնդիր 1. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերանորոգման և նորովի կառուցման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ միջոցների սակավություն:

Խնդիր 2. Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգման ցանցերի բացակայությունը:

Խնդիր 3. Համայնքային նշանակության այգիների, պուրակների անմխիթար վիճակ:

Խնդիր 4. Համայնքային նշանակության ճանապարհների ոչ պատշաճ վիճակ:

Խնդիր 5. Համայնքային կանգառների թերի կահավորված և ոչ նպատակային հասցեական կարգավիճակ:

Խնդիր 6. Համայնքային նշանակության մարզական, կրթական, մշակութային տների և հաստատությունների սակավություն և ոչ բարվոք վիճակ:

5. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ռազմավարությամբ բացահայտված և առաջնահերթություն համարվող խնդիրների լուծման համար նախաձեռնող խմբի կողմից ձեռնարկվել են հետևյալ գործողությունները՝

1) Համայնքային բյուջեի և նվիրատուների միջոցով սույն ռազմավարության գործունեության ժամկետներում հիմնովին կառուցել և վերանորոգել շուրջ 10 մարզական, կրթական, մշակութային շենքեր և հաստատություններ:

2) Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով կազմակերպել բարեգործական համերգներ, միջոցառումներ, դրամահավաքներ և հանգանակություններ:

3) Համայնքային բյուջեի հնարավոր միջոցների, ինչպես նաև միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների օգնությամբ իրականացնել տարաբնույթ ծրագրեր համայնքի տարածքում ոռոգման հողատեսքերի մակերեսների մեծացման նպատակով:

4) Նախաձեռնել տարբեր կամպանիաներ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի պոտենցիալ վարձակալների շրջանում, վարձակալության գրավչությունը մեծացնելու ակնկալիքով:

5) Ակտիվ քայլեր և ծրագրեր իրականացնելու շնորհիվ յուրաքանչյուր գյուղում վերակառուցել և պատշաճ վիճակի հասցնել այգի կամ պուրակ, իսկ այն գյուղերում , որտեղ չկան նման տարածքներ, ապա հիմնովին կառուցել, այնպես, որ բոլոր գյուղերում լինեն գործող այգիներ կամ պուրակներ:

6) Ռազմավարությամբ սահմանված ժամկետի ավարտին յուրաքանչյուր գյուղում ունենալ վերականգված և հանրային ծառայության պատրաստ այգի կամ պուրակ:

6. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սույն ռազմավարության իրականացման արդյունքում արձանագրենք՝

- Փարաքար համայնքում ունենալ նորովի վերականգված կամ կառուցված 10 մարզական, կրթական, մշակութային հաստատություններ շենքեր և հաստատություններ:
- 2030 թվականին մշակութային, մարզական, կրթական համայնքային ենթակայության հաստատություններում ունենալ կրկնակի ավելի շահառուներ, քան որ փաստարկված է ծրագրի մեկնարկում:
- Ոռոգման համակարգի ընդգրկման կարողությունները կավելանան շուրջ 40% չափով:
- Ավելացնելով վարձակալության տրված գույքի քանակը, կապահովվի համայնքային գույքի նպատակային և արդյունավետ օգտագործումը, որի արդյունքում կավելանա համայնքի բյուջետային մուտքերը:
- Համայնքի բոլոր բնակավայրերում ունենալ բարեկարգ, գործունակ այգիներ կամ պուրակներ: Իսկ ռազմավարության ավարտին յուրաքանչյուր բնակավայրում ունենալ վերականգնված կամ նոր կառուցված այգի կամ պուրակ:

7. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման նկատմամբ առանձնակի պահանջը համայնքային իշխանությունների համար առաջնահերթություն է ընդհանրապես: Այն կարևոր է, ինչպես բնակչության առաջնային, այնպես էլ տարածական խնդիրների լուծման անհրաժեշտությունների համատեքստում: Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման միասնական ծրագիրը նաև ՀՀ օրենսդրության պահանջն է: Նկատի ունենալով վերոգրյալը, սույն նախաձեռնության հեղինակները կարծում են, որ սույն ռազմավարությունը կնպաստի համայնքի ամբողջական զարգացմանը:

Նախատեսվում է, որ որոշակի պարբերականությամբ կվերանայվի սույն ռազմավարության բովանդակությունը, կհարմարեցվի գործող իրավիճակին և կառաջարկվի անհրաժեշտ փոփոխություններ, համայնքային սեփականություն հանդիսացող գույքը առավել արդյունավետ և կառավարելի դարձնելու միտումով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ»

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 5

«15» օգոստոս 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու «Ֆինանսաբյուջետային, տնտեսական և ենթակառուցվածքների հարցերի» մշտական գործող հանձնաժողովի 2025թ օգոստոսի 15-ի N 4 արտահերթ նիստի ընթացքում հանձնաժողովը **որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2025-2030 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին քննարկվող հարցին տալ դրական եզրակացություն:

Կողմ՝ 4 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Էմմա Թորոսյան

Աբրահամ Աբրահամյան

Անյուտա Սաֆարյան

Աբրահամ Ֆարֆարյան

Հանձնաժողովի նախագահ՝ Էմմա Թորոսյան